

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Առաջին Կարգ

Ընթերցանութիւն

1. Տառանաչառութիւն մինչեւ բառապաշարի աստիճանական զարգացում

Աշակերտները կը հասկնան ընթերցանութեան հիմնական առանձնայատկութիւնները, կը քննարկեն տպագրուած գրութեան տառերը եւ կրնան զանոնք իրարու կապելով խօսքի վերածել՝ օգտագործելով հնչիւնաբանութեան, վանկատման եւ բառամասերու վերծանման իրենց գիտելիքները: Այս հանգրուանները աշակերտները կ'առաջնորդեն սահուն կարդալուն՝ բարձրաձայն կամ մտովի:

- 1.1 Կարենալ քննարկել բանաւոր ըսուած բառին տպագրուած տարբերակը.
- 1.2 Կարենալ քննարկել ընթերցանութեան նիւթին վերնագիրը.
- 1.3 Կարենալ քննարկել եւ կարդալ տառերը, բառերը եւ ապա նախադասութիւնները.
- 1.4 Կարենալ զանազանել միավանկ բառերու առաջին, վերջին եւ մէջտեղի հնչիւնները.
- 1.5 Կարենալ ստեղծել եւ արտասանել իմաստ ունեցող յանգաւորուած բառեր. օրինակ՝
ջուր-սուր-տուր.
- 1.6 Կարենալ միավանկ բառերը իրենց հնչիւններով հեզել. օրինակ՝ *ձի-ձ/ի*
հաւ-հ/ա/ւ, դեղձ-դ/ե/ղ/ձ.
- 1.7 Իմանալ բոլոր գիրերուն հնչիւնները.
- 1.8 Կարենալ կարդալ բարդ եւ ածանցաւոր բառեր.
- 1.9 Կարենալ կարդալ հոլովուած բառեր.
- 1.10 Կարենալ կարդալ խոնարհուած բայեր.
- 1.11 Կարենալ սահուն կարդալ, որ բնական խօսքի նման հնչէ.
- 1.12 Կարենալ դասակարգել դասարանին մէջ սորված բառերը.
օրինակ՝ կենդանիներ, ուտելիք, խաղալիկ.

2. Ընթերցանութեան ըմբռնում (հասկացողութիւն)

Աշակերտները մանկական գրականութիւն կը կարդան եւ կ'արտայայտուին անոր մասին:

Աշակերտները կը կարդան եւ կ'ըմբռնեն դասարանին մէջ ներկայացուած նիւթը: Անոնք կ'օգտագործեն հասկնալու զանազան միջոցներ (կարեւոր հարցումներ կու տան եւ հարցումներու կը պատասխանեն, նախատեսումներ կ'ընեն եւ նախապէս քաղած տեղեկութիւնները տրուած նիւթին հետ կը համեմատեն):

- 2.1 Կարենալ ճշտորոշել պատմութեան հերթականութիւնը ամենէն պարզ իմաստով.
- 2.2 Կարենալ պատասխանել ուսուցիչին ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, ու՞ր (որտե՞ղ), ինչպէ՞ս եւ ինչո՞ւ հարցումներուն.
- 2.3 Կարենալ գրաւոր կերպով եւ ամբողջական նախադասութեամբ պատասխանել նիւթին առնչուող կարճ հարցումի մը.
- 2.4 Կարենալ նիւթին բովանդակութենէն հետեւցնել իրեն համար անծանօթ բառերուն իմաստը.
- 2.5 Պատմութեան կամ նիւթին մէջ բանալի բառերը զատորոշելով, կարենալ նախատեսել անոր շարունակութիւնը.
- 2.6 Նախապէս ստացած գիտելիքները կարենալ կապել տրուած նիւթին.
- 2.7 Կարենալ ընդհանուր գիծերու մէջ վերապատմել նիւթը.
- 2.8 Կարենալ մանչնալ եւ բացատրել պատմութեան սկիզբը, մէջտեղը եւ վերջը.
- 2.9 Կարենալ մանչնալ եւ բացատրել նիւթին ծրագիրը (plot), միջավայրը եւ դերակատար կերպարները.
- 2.10 Կարենալ տարուան ընթացքին կարդացած գիրքերուն մասին խօսիլ եւ կարճ նախադասութիւններով անոնց մասին բացատրութիւններ գրել.
- 2.11 Կարենալ ուսուցիչին հարցումին պատասխանել ամբողջական նախադասութեամբ.
- 2.12 Կարենալ սորված բառերը կապել նիւթին եւ նախադասութիւններու մէջ գործածել զանոնք.
- 2.13 Կարենալ ամուսան նիւթին համապատասխանող ոտանաւորներ արտասանել.
- 2.14 Կարենալ դասը թատրոնի ձեւով ներկայացնել.

Գրել

1.0 Գրելու օրինաչափությունը

Աշակերտները կը գրեն պարզ նախադասություններ եւ պարբերություններ, որոնք գաղափար մը կ'արտայայտեն ու կը զարգացնեն: Աշակերտներուն գրելու կարողությունը կը յառաջանայ որոշադրուած հանգրուաններով (օրինակ՝ սեւագրություն, վերատեսություն եւ խմբագրում):

1.1 Գրելու ատեն անպայման նպատակ մը ճշդիլ եւ կեդրոնական այդ նպատակին շուրջ.

1.2 Գրութեան մէջ նկարագրական բառեր (ածականներ) գործածել.

1.3 Կարենալ գրաւոր բացատրել զանազան տօներու եւ կարելոր թուականներու խորհուրդները եւ նկարագրել անձնական կեանքէն վերցուած դէպքեր (*խորհուրդ բառը այստեղ պէտք է հասկնալ հիմնական միտքը եւ իմաստը կարենալ արտայայտելու առումով. աշակերտներէն պէտք է ակնկալել վերացական ու բարդ մտածումներ*).

2.0 Գրելու կիրարկումը (ոն եւ յատկանիշները)

Աշակերտները կը գրեն կարճ եւ պարզ շարադրություն, որ կը նկարագրէ եւ կը բացատրէ սովորական իրերը, դէպքերը եւ կամ անձնական փորձառություն մը: Անոնց գրությունը ցոյց կու տայ, թէ իրեց մակարդակին համապատասխան որքանով սորված են հայերէն լեզուն:

2.1 Տառերը (գլխագիր եւ պարզ), բառերը եւ նախադասությունները գրել ընթեռնելի, համաչափ եւ հաւասար տարածություններով.

2.2 Կարենալ գրել պատմողական շարադրություն մը (երեւակայական կամ ինքնակենսագրություն), որ փորձառություն մը կը նկարագրէ.

2.3 Կարենալ գրել բացատրական շարադրություն մը, որ մանրամասնօրէն կը նկարագրէ անձ մը, դէպք մը կամ վայր մը.

Քերականություն

- 1.1 Ջանազանել եւ տեղին գործածել գոյականի եզակի եւ յոգնակի ձեւերը.
- 1.2 Ճանչնալ գլխագիրի գործածութեան օրէնքները *(այս հանգրուանին նախադասութեան սկիզբը, յատուկ անունները եւ վերջակէտէն ետք)*.
- 1.3 Կարենալ բառ մը վանկերու բաժնել.
- 1.4 Կարենալ ձայնաւոր եւ բաղաձայն տառերը գատորոշել.
- 1.5 Կարենաւ բառին հականիշը եւ հոմանիշը գիտնալ.

Կէտադրություն

- 1.6 Կարենալ զանազանել հաստատող, հարցական, հրամայական եւ բացականչական նախադասութիւնները.
- 1.7 Վերջակէտի գործածութիւն նախադասութեան աւարտին:

Ուղղագրություն

- 1.8 Կարենալ նիշդ ուղղագրութեամբ գրել դասանիւթէն առնուած շարաքական դրութեամբ 3-4 տառերէ կազմուած 8-10 բառ (այս մէկը պէտք է կարենալ իրագործել տարուան ընթացքին՝ աստիճանական զարգացումով).

Ունկնդրել և խօսիլ

Լսելու և խօսելու Strategy-ներ

Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն և կը պատասխանեն հարցումներուն: Անոնց բանաւոր խօսքը պէտք է ունենայ նիշդ առոգանութիւն, ձայնի ելեւէջ և բառերու նիշդ կապակցութիւն, դիրքըմբռնելի դարձնելու համար խօսքին իմաստը և գլխաւոր գաղափարը:

- 1.1 Աշակերտները պէտք է վարժուին ուշադրութեամբ լսել.
- 1.2 Հարցումներ տալ աշակերտներուն, նիւթը աւելի լաւ կարենալ հասկցնելու և պարզաբանումներ ստանալու համար.
- 1.3 Կարենալ հետեւիլ ուսուցիչի ցուցմունքներուն, որոնք առաւելագոյնը մէկ կամ երկու հանգրուան կ'ընդգրկեն.
- 1.4 Խօսելու ատեն նիւթին մէջ մնալ.
- 1.5 Անձերու, վայրերու և առարկաներու մասին խօսելու ատեն գործածել նկարագրական բառեր (ածականներ).

2.0 Խօսքի կիրառութիւններ (ոն և անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները բանաւոր կարճ արտայայտութիւններ կ'ունենան և անգիր կ'արտասանեն իրենց դասարանին յարմար ոտանաւորներ: Անոնց արտայայտութիւնը կ'ունենայ կառոյց և կազմակերպուածութիւն՝ կեդրոնացուած մէկ միտքի կամ գաղափարի շուրջ, որ ցոյց կու տայ անոնց վարժ ու սահուն խօսելու կարողութիւնը.

- 2.1 Կարենալ արտասանել ոտանաւորներ, յանգաւորումներ, երգեր և պատմուածքներ.
- 2.2 Կարենալ վերապատմել պատմութիւն մը՝ յարգելով դէպքերուն յաջորդականութիւնը և պատասխանել ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, ու՞ր (որտե՞ղ), ինչո՞ւ և ինչպէ՞ս հարցումներուն.
- 2.3 Կարենալ պատմել անձնական կեանքէն վերցուած դէպք մը.
- 2.4 Կարենալ նկարագրել պատկերաւոր մանրամասնութիւններ.

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում (ընկալում եւ բացատրութիւն), սահուն ընթերցանութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում

Աշակերտները կը հասկնան ընթերցանութեան նիւթին հիմնական միտքերը: Անոնք գիտեն կապակցուած բառերը եւ կրնան զանոնք խօսակցական լեզուի մէջ օգտագործել: Անոնք այս գիտելիքները օգտագործելով կը յաջողին սահուն ընթերցել՝ մտովի կամ բարձրաձայն:

- 1.1 Ընթերցանութեան ընթացքին կարենալ ճանչնալ եւ օգտագործել հեգելու կանոնները (օր. երկրարբառները եւ ձայնաւորներուն բնորոշ հեգելու կանոնները).
- 1.2 Ընթերցանութեան ընթացքին կարենալ կիրարկել վանկատումի կանոնները.
- 1.3 Կարենալ միշտ ձեռով կատարել բառերուն յոգնակի թիւի կազմութիւնը.
- 1.4 Կարենալ բարձրաձայն , սահուն եւ միշտ կարդալ՝ օգտագործելով համապատասխան հնչերանգ եւ արտայայտչականութիւն.
- 1.5 Սորվիլ դասագիրքէն դուրս նոր բառեր, որոնք առօրեայ գործածութիւն ունին.
- 1.6 Կարենալ հասկնալ ու բացատրել բառերուն հոմանիշները եւ հականիշները.
- 1.7 Կարենալ բարդ եւ անծանօթ բառերուն մէջ ծանօթ ու պարզ բառերուն ճանաչողութիւնը օգտագործել՝ բառին իմաստը կոտորելու համար.
- 1.8 Գիտնալ նախածանցով եւ վերջածանցով կազմուած բառերուն իմաստը.
- 1.9 Ճանչնալ բազմիմաստ պարզ բառերը.

2.0 Ընթերցանութեան ըմբռնումը

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք ընթերցանութեան նիւթը հասկնալու համար կ'օգտագործեն զանազան միջոցներ (հարցումներ կու տան եւ հարցումներու կը պատասխանեն, նախատեսումներ կ'ընեն եւ նախապէս քաղած տեղեկութիւնները տրուած նիւթին հետ կը համեմատեն):

- 2.1 Բացատրական նիւթի մը իմաստը հասկնալու համար կարենալ օգտագործել վերնագիրները, բովանդակութեան ցանկը եւ ենթագլուխներու խորագիրները.

- 2.2 Կարենալ ընթերցանութեան նիւթէն հասկնալ ու ըմբռնել գրութեան հիմնական միտքը.
- 2.3 Պարզաբանման հարցեր տալ՝ բացատրական նիւթի մը կարեւոր տեղեկութիւնները ընկալելու համար (օր. ինչու՞, ի՞նչ կ'ըլլայ եթէ, ինչպէ՞ս).
- 2.4 Նիւթին գաղափարները յստակացնելու եւ հասկնալու համար Կրկնել մանրամասնութիւնները.
- 2.5 Տրուած նիւթին մէջ կարենալ պատճառ-հետեւանք կապակցութիւնը գտնել.
- 2.6 Տեղեկութիւններ փոխել նիւթին կցուած նկարներէն եւ գծագրութիւններէն.
- 2.7 Կարենալ հետեւիլ երկու հանգրուաններէ կազմուած գրաւոր հրահանգներուն.

3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան մանկական գրականութենէն առնուած զանազան կտորներ եւ իրենց կարծիքը կը ձեւաւորեն: Անոնք կը կարողանան իրարմէ գատորոշել նիւթին կառուցային եւ գրական տարրերը (թեման, պատումին նախագիծը [plot], միջավայրը եւ պատումին կերպարները):

- 3.1 Կարենալ համեմատել եւ հակադրել տարրեր նիւթերու միջավայրը, պատումի նախագիծը եւ կերպարները.
- 3.2 Կարենալ կարդացուած նիւթերուն համար առաջադրել տարրեր վերջաւորութիւններ, բացատրել այդ տարրերակներու ընտրութեան պատճառը ու անոնց առաջ բերած ազդեցութիւնը պատումին վրայ.
- 3.3 Կարենալ համեմատել տարրեր մշակոյթներու պատկանող սովորութիւններն ու անոնց նիւթերը:
- 3.4 Կարենալ նանչնալ բանաստեղծութեան մը մէջ օգտագործուած ոտքերը (ոիթմը), յանգը եւ նմանաձայնութիւնը:

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններ եւ պարբերութիւններ, որոնք գլխաւոր գաղափար մը կը զարգացնեն: Աշակերտները կը յառաջանան գրաւոր խօսքի գործընթացով կամ հանգրուաններով (օր. ուրուագրել, սեւագրել, սրբագրել եւ խմբագրել):

- 1.1 Համադրել միտքերը եւ մնալ նշդուած նիւթին մէջ:
- 1.2 Կարենալ գրել ընթեռնելի եւ համաչափ ձեռագրով.
- 1.3 Գիտնալ օգտագործուող զանազան աղբիւրներուն բնոյթը (օր. բառարան, քարտէզ, համացանց, եւ այլն).
- 1.4 Կարենալ վերստուգել սեւագրութիւնը՝ նշգրտելու համար միտքերու յաջորդականութիւնը եւ աւելցնելու համար նկարագրական յաւելեալ մանրամասնութիւններ.

2.0 Գրաւոր խօսքի կիրառութիւնները (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները կը գրեն պարզ շարադրութիւններ, որոնք կը նկարագրեն ծանօթ առարկաներ, իրադարձութիւններ եւ փորձառութիւններ: Անոնց գրութիւնը ցոյց կու տայ անոնց մօտ հայերէն լեզուի իմացութիւնը:

- 2.1 Կարենալ գրել պատմողական շարադրութիւն մը, մղուած անձնական փորձառութեանէ՝
 - ա. պահպանելով դէպքի տրամաբանական յաջորդականութիւնը.
 - բ. մանրամասնօրէն նկարագրելով միջավայրը, դէմքերը, առարկաները եւ դէպքերու ընթացքը.
- 2.2 կարենալ ընկերական նամակներ գրել՝ ընդգրկելով ամսաթիւ, ողջոյնի խօսք, նամակի գլխաւոր միտքը, վերջաբան եւ ստորագրութիւն.

Գրաւոր եւ բանաւոր խօսքի օրինաչափութիւն

Աշակերտները իրենց դասարանի մակարդակին համաձայն, կը գրեն եւ կը խօսին հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով:

- 1.1 Կարենալ տարբերել ամբողջացուած եւ կիսաւարտ նախադասութիւնները.
- 1.2 Ճանչնալ եւ ի գործ դնել գրաւոր խօսքի նիշի շարահիւսութիւն.

Քերականութիւն

- 1.1 Գրաւոր եւ բանաւոր խօսքին մէջ կարենալ շանչնալ եւ գործածել խօսքի մասերուն ճշգրիտ ձեւերը (գոյականներ, բայեր):
- 1.2 Կարենալ ճիշդ ձեւով օգտագործել կէտադրական նշանները (ստորակէտ, միջակէտ եւ վերջակէտ):
- 1.3 Կարենալ ճիշդ ձեւով օգտագործել չակերտը:
- 1.3 շանչնալ գլխագիրի գործածութեան օրէնքները (*այս հանգրուանին՝ նախադասութեան սկիզբը, յատուկ անունները, վերջակէտէն ետք, ամսուան անունները, շարքուան օրերը, վերնագրերը եւ մարդոց տիտղոսները*):

Ունկնդրել եւ խօսիլ

Աշակերտները քննական ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանգեն անոր: Աշակերտներուն օգտագործած ռնը, ձայնի բարձրութիւնը եւ ելուէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդիրին՝ հասկնալու համար նիւթը:

Աշակերտները բանաւոր հակիրճ խօսքով կ'արտայայտուին իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին, որ կազմակերպուած եւ կեդրոնացած կ'ըլլայ մէկ նիւթի շուրջ: (Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ անոնց մօտ հայերէն լեզուի աստիճանական զարգացումը եւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը):

- 1.1 Ուշադրութեամբ լսել, ըսուածը հասկնալու, տեղեկութիւն ձեռք բերելու, ինդիքներ լուծելու կամ ընդհանրապէս՝ հանոյքի համար:
- 1.2 Հարցեր տալ պատմութեան եւ արտայայտուած միտքերու մասին պարզաբանումներ ստանալու համար:
- 1.3 Ուրիշներու կողմէ արտայայտուած միտքերը կարենալ վերաշարադրել:
- 1.4 Կարենալ երկու, երեք կամ չորս հանգրուաններէ բաղկացած բանաւոր ցուցմունքներ տալ եւ կամ հետեւիլ անոնց:
- 1.5 Համադրուած կերպով կարենալ կազմակերպել միտքը ու արտայայտել բանաւոր խօսքը:
- 1.6 Խօսիլ յստակ՝ պահելով անհրաժեշտ կշռոյթը:
- 1.7 Կեանքի փորձառութիւնները կարենալ վերապատմել տրամաբանական յաջորդականութեամբ:

1.8 Վերապատմել դրուագ մը, որ ունենան յատուկ նախագիծ, գործող կերպարներ եւ միջավայր.

1.9 Որեւէ նիւթի մասին կարենալ զեկուցել, անհրաժեշտ մանրամասնութիւններ եւ փաստեր բերելով.

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Երրորդ Դասարան

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում, ընթերցանութեան սահունութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում.

Աշակերտները կը հասկնան ընթերցանութեան հիմնական առանձնա-յատկութիւնները: Անոնք կը ճանչնան կապակցուած տառերը (երկրարբառները) եւ զանոնք խօսակցական լեզուի կը վերածեն՝ օգտագործելով հնչիւնաբանութիւնը, վանկատումը եւ բառամասերը: Անոնք այս գիտելիքները օգտագործելով կը յաջողին սահուն ընթերցել՝ մտովի կամ բարձրաձայն:

- 1.1 Ընթերցանութեան ընթացքին բառամասերու ճանաչումով կարենալ դիրութեամբ կարդալ անձանօք բառերը.
- 1.2 Կարենալ վերծանել բազմավանկ բառեր.
- 1.3 Կարենալ բարձրաձայն, սահուն եւ ճիշդ կարդալ նկարագրական եւ բացատրական գրութիւններ՝ համապատասխան առոգանութեամբ, հնչերանգներով եւ արտայայտչական միջոցներով.
- 1.4 Կարենալ օգտագործել հումանիշ, հականիշ, նմանաձայն եւ բազմանիշ բառերու գիտելիքը՝ բառի մը իմաստը որոշելու համար.
- 1.5 Կարենալ նիւթին բովանդակութենէն հետեւցնել իրեն համար անձանօք բառերուն իմաստը.
- 1.6 Օգտագործել հայերէնէ-հայերէն բառարան՝ անձանօք բառի մը իմաստը եւ անոր առանձնայատկութիւնները իմանալու համար.
- 1.7 Օգտագործել նախածանցներու եւ վերջածանցներու գիտելիքը՝ անձանօք բառի մը իմաստը կոտակելու համար.

2.0 Ընթերցանութեան ըմբռնումը

Աշակերտները մանկական գրականութիւն կը կարդան եւ կ'արտայայտուին անոր մասին:

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք կ'օգտագործեն հասկնալու զանազան միջոցներ (կարեւոր հարցումներ կու տան եւ

հարցումներում կը պատասխանեն, նախատեսումներ կ'ընեն եւ նախապէս ֆադած տեղեկութիւնները տրուած նիւթին հետ կը համեմատեն):

- 2.1 Նիւթի մը մէջ փնտրուած տեղեկութիւն մը գտնելու համար կարենալ օգտագործել վերնագիրները, բառացանկը եւ բովանդակութիւնը.
 - 2.2 Կարենալ հարցումներ տալ եւ իրեն ուղղուած հարցումներում պատասխանները հիմնաւորել՝ զանոնք կապելով նախապէս սորված գիտելիքներում եւ գրութեան ընդմէջէն ձեռք բերած տեղեկութիւններում.
 - 2.3 Գրութիւն մը հասկնալ տրուած հարցումներում պատասխանները անոր մէջ գտնելով.
 - 2.4 Կարենալ նշել նիւթին կարեւոր կէտերը եւ անոնց վրայ հիմնուելով, կարենալ նիւթին վերջաւորութիւնը նախատեսել կամ զայն փոխելու առաջարկ տալ.
 - 2.5 Կարենալ նշողորոշել բացատրողական նիւթի մը հիմնական գաղափարը եւ զայն պաշտպանող մանրամասնութիւնները.
 - 2.6 Կարենալ գրութեան մէջէն ֆադել հիմնական տեղեկութիւնները՝ ներառեալ թնուկները (problems) եւ անոնց լուծումները.
 - 2.7 Կարենալ հետեւիլ երկու հանգրուաններէ բաղկացած գրաւոր հրահանգի մը (գրաւոր հրահանգ մը առաւելագոյնը երկու հանգրուաններէ բաղկացած պէտք է ըլլայ).
- 3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան մանկական գրականութենէն առնուած զանազան կտորներ եւ իրենց կարծիքը կը ձեւաւորեն: Անոնք կը կարողանան իրարմէ՛ զանազանել նիւթին կառուցային եւ գրական տարրերը (թեման, պատումին նախագիծը [plot], միջավայրը եւ պատումին կերպարները):

- 3.1 Կարենալ զանազանել սովորական գրական ժանրերը (օր.՝ բանաստեղծութիւն, թատերագութիւն, արձակ գրականութիւն):
- 3.2 Կարենալ հասկնալ հայ դասական հեփիաթներու, առասպելներու եւ գրոյցներու հիմնական միտքը (նախագիծը կամ plot-ը).
- 3.3 Գրութեան տուած տեղեկութիւններում վրայ հիմնուելով կարենալ որոշել կերպարի մը կամ հերոսի մը ֆիզիքական, բարոյական եւ հոգեկան յատկանիշները:
- 3.4 Կարենալ հասկնալ եւ բացատրել գրութեան մը թեման եւ հեղինակին պատգամը.

3.5 Գրութեան մը մէջ կարենալ գտնել նմանաձայնութիւններ, բառերու յանգաւորումներ, ոտք (ռիթմ) եւ բնութեան ձայներու նման հնչող բառեր (onomatopoeia).

3.6 Կարենալ նանչնալ գրութեան պատմողը կամ խօսնակը.

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններ եւ պարբերութիւններ, որոնք գլխաւոր գաղափար մը կը զարգացնեն: Աշակերտները կը յառաջանան գրաւոր խօսքի գործընթացով կամ հանգրուաններով (օր. ուրուագրել, սեւագրել, սրբագրել եւ խմբագրել):

1.1 Կարենալ շարադրել պարբերութիւն մը՝

- ա.** զարգացնել հիմնական միտքը արտայայտող նախադասութիւնը (topic sentence).
- բ.** ներառել պարբերութեան նպատակը հիմնաւորող մանրամասնութիւններ.
- գ.** միտքերու յաջորդականութիւնը եւ զարգացումը պահելով, պարբերութիւնը հասցնել տրամաբանական աւարտին:

1.2 Կարենալ գրել մաքուր, ընթեռնելի եւ համաչափ ձեւագիրով՝ պահելով լուսանցքները եւ տառերու, բառերու եւ նախադասութիւններու համաչափ տարածութիւնները.

1.3 Գիտնալ օգտագործուած աղբիւրներու կազմութիւնը եւ կառոյցը (օր. բառարան, քարտէզ, հանրագիտարան, համացանց, եւ այլն).

1.4 Վերստուգել սեւագրութիւնը, կարենալ պահելու համար միտքերու յաջորդականութիւնը՝ հաստատուած ձեւաչափի (rubric) մը հետեւելով.

2.0 Գրաւոր խօսքի կիրառութիւնները (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները շարադրութիւններ կը գրեն, որոնք կը նկարագրեն ծանօթ առարկաներ, իրադարձութիւններ եւ փորձառութիւններ: Անոնց գրութիւնը ցոյց կու տայ անոնց մօտ հայերէն լեզուի իմացութիւնը եւ ուսումնասիրելու, ուրուագրելու եւ սրբագրելու կարողութիւնը:

2.1 Կարենալ գրել պատմողական շարադրութիւն (պատում)՝

- ա.** մշակելով բովանդակութիւն մը, որուն մէջ գոծողութիւնը կը կատարուի.
- բ.** նախագիծը (plot) զարգացնելու համար ընդգրկել լաւ ընտրուած եւ հետաքրքրական մանրամասնութիւններ.
- գ.** յաւելնալ բացատրութիւններով նշել, թէ ինչն^ը ընտրուած իրադարձութիւնը յիշարժան է.

2.2 Նկարագրել ֆիզիքական և զգացական մանրամասնություններ , որոնք
աւելի լայն տպաւորութիւններ կը մատուցեն մարդոց, միջավայրի,
իրերու և փորձառութիւններու մասին.

2.3 Կարենալ գրել անձնական և պաշտօնական նամակներ, շնորհակալական
գիրքեր և հրաւերներ (ընդգրկել թուականը, ողջոյնի խօսք, նամակին
բովանդակութիւնը (մարմինը), վերջաբան և ստորագրութիւն):

Գրաւոր և բանաւոր խօսքի օրինաչափութիւն
--

*Աշակերտները իրենց դասարանի մակարդակին համաձայն կը գրեն և կը խօսին
հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով:*

1.1 Կարենալ հասկնալ և բանաւոր և գրաւոր խօսքին մէջ օգտագործել
հաստատական, հարցական, հրամայական և բացազանչական նախադասութիւններ.

Քերականութիւն

- 1.1 Ծանօթանալ խօսքի հիմնական մասերուն. կարենալ ցանչնալ ենթական եւ բայը, յարգելով անոնց թիւին եւ դէմքին համաձայնութեան օրէնքները: Ճիշդ ձեւով օգտագործել դերանունները, ածականները, բարդ բառերը եւ որոշիչ յօդերը.
- 1.2 Կարենալ ցանչնալ եւ բանաւոր ու գրաւոր խօսքի մէջ ճիշդ գործածել բայերուն ներկայ, անցեալ եւ ապառնի ժամանակները.
- 1.3 Կարենալ ցանչնալ եւ նախադասութիւններու մէջ ճիշդ գործածել ենթական եւ բայը.
- 1.4 Ճանչնալ նախադաս եւ յետադաս մասնիկներու կազմութիւնը.
- 1.5 Ճիշդ ձեւով օգտագործել կէտադրական նշանները:
- 1.6 Ճիշդ ձեւով կիրարկել գլխագիրի գործածութիւնը:
- 1.7 Սորվիլ օ եւ ո-ի, ե եւ է-ի, վ, լ եւ ու-ի ուղղագրական կանոնները.
- 1.8 Սորվիլ բառի վերջաւորութեան ոյ-ի եւ այ-ի գործածութեան օրէնքը.
- 1.9 Կարենալ բառերը այբենական կարգով շարել.

Ունկնդրել եւ խօսիլ

Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանգեն անոր: Աշակերտներուն օգտագործած ռնր, ձայնի բարձրութիւնը եւ ելեւէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդրիւն, հասկնալու համար ճիշդ գլխաւոր գաղափարը:

- 1.1 Կարենալ վերապատմել, հակիրճ գաղափար տալ եւ բացատրել խօսողի մը ըսածները.
- 1.2 Կարենալ նախապէս ստացած տեղեկութիւնները կամ գաղափարները կապել խօսողի ըսածներուն:
- 1.3 Հարցումներու պատասխանել ոչ պարզունակ, այլ մշակուած եւ ամբողջական նախադասութիւններով.
- 1.4 Կարենալ ցանչնալ գրաւոր խօսքին երաժշտականութիւնը (օր.՝ նմանաձայնութիւններ, բառերու յանգաւորումներ, ոտք, եւ բնութեան ձայներու նման հնչող բառեր, – onomatopoeia).

- 1.5 Համադրուած ու կազմակերպուած կերպով արտայայտել բանաւոր խօսք մը, ուշադրութիւն դարձնելով ժամանակագրութեան կամ տեղեկատուական կարեւոր կէտերուն.
- 1.6 Մատուցել բանաւոր խօսք, որ ունենայ միտքերու տրամաբանական յաջորդականութիւն՝ մուտք, մարմին (մէջտեղ) եւ եզրակացութիւն (վերջ) եւ ընդգրկէ մանրամասնութիւններ, որոնք հիմնական գաղափար մը կը զարգացնեն.
- 1.7 Գաղափարներ արտայայտելու ընթացքին օգտագործել յստակ եւ ճշգրիտ բառապաշար եւ յարմար ոճ.
- 1.8 Բանաւոր ներկայացումները աւելի դիւրըմբռնելի եւ հետաքրքրական դարձնելու համար օգտագործել առարկաներ, նկարներ, գծագրութիւններ եւ այլ միջոցներ.
- 1.9 Բարձրաձայն եւ սահուն կարդալ արձակ եւ բանաստեղծութիւն՝ ուշադրութիւն դարձնելով յարմար առոգանութեան, ձայնի ելեւէջներուն եւ կարեւոր մասերու շեշտաւորման.
- 1.10 Մատուցուած բանաւոր խօսքին մէջ կարենալ համեմատել գաղափարներ եւ տեսակէտներ.

2.0 Խօսքի կիրառութիւններ (ոճ եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները կը կարողանան իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին կատարել հակիրճ բանաւոր ներկայացում, որ կազմակերպուած ըլլայ մէկ նիւթի շուրջ, (անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ անոնց մօտ հայերէն լեզուի աստիճանական զարգացումը, ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը):

2.1 Աշակերտները կը կ'ունենան պատմողական կարճ ելոյթներ՝

ա. անհրաժեշտ բացատրութիւններով նշել, թէ ինչո՞ւ ընտրուած նիւթը յիշարժան է.

բ. նախագիծը (plot) զարգացնելու եւ կերպարներն ու միջավայրը ներկայացնելու համար ընդգրկել մանրամասնութիւններ.

2.2 Ծրագրել եւ մատուցել թատերական կտորներու, բանաստեղծութիւններու, անձնական փորձառութիւններու եւ պատմուածքներու ներկայացումներ, ուշադրութիւն դարձնելով առոգանութեան եւ արտայայտչական ձեւերուն. ներկայացման ընթացքին շեշտել ֆիզիքական, զգացական եւ հոգեկան առանձնայատկութիւններ եւ վիճակներ, որոնք աւելի լայն տպաւորութիւններ կը մատուցեն մարդոց, միջավայրի, իրերու եւ փորձառութիւններու մասին.

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Զորրորդ Դասարան

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում, ընթերցանութեան սահունութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում

Աշակերտները կը հասկնան ընթերցանութեան հիմնական առանձնայատկութիւնները: Անոնք կը մանչնան կապակցուած տառերը (երկրարբանները) եւ գիտեն զանոնք խօսակցական լեզուի մէջ միշտ ձեւով կիրարկել՝ օգտագործելով հնչիւնարանութիւնը, վանկատումը եւ բառամասերը: Անոնք այս գիտելիքները օգտագործելով կը յաջողին սահուն ընթերցել՝ մտովի կամ բարձրաձայն:

- 1.1 Դասարանի մակարդակին համապատասխան կարենալ սահուն եւ նշգրիտ կերպով բարձրաձայն կարդալ նկարագրական եւ բացատրական գրութիւններ՝ նիւթին յարմար կշռոյթով (արագութեան աստիճան), հնչերանգով ու արտայայտչական միջոցներով.
- 1.2 Կարենալ օգտագործել բառերու ստուգաբանութեան, հոմանիշ ու հականիշ բառերու եւ դարձուածքներու գիտելիքը՝ բառի մը կամ նախադասութեան մը մէջ բառակապակցութեան իմաստը հասկնալու համար.
- 1.3 Կարենալ օգտագործել արմատ բառերու գիտելիքը՝ անձանօք բառի մը իմաստը կոստիւնիւ համար.
- 1.4 Կարենալ օգտագործել հայերէնէ-հայերէն բառարան.
- 1.5 Կարենալ մանչնալ եւ զանազանի բազմիմաստ կամ բազմանիշ բառերու իմաստները.

2.0 Ընթերցանութեան ըմբռնումը

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք կ'օգտագործեն հասկնալու զանազան միջոցներ (հարցումներ կ'ուղղեն, հարցումներու կը պատասխանեն, կանխատեսումներ կ'ընեն եւ նախապէս քաղած տեղեկութիւնները տրուած նիւթին հետ կը համեմատեն):

- 2.1 Նիւթը ըմբռնելու համար կարենալ նշդորոշել տեղեկատուական նիւթի մը կառուցային ձեւը (համեմատութիւն/հակադրութիւն, պատճառ/հետեւանք, դէպքերու հերթականութիւն կամ

ժամանակագրական կարգ, առաջարկ եւ անոր հիմնաւորումը)։

- 2.2 Կարենալ օգտագործել կարդալու եւ հասկնալու տարբեր միջոցներ՝ ըստ ընթերցանութեան նպատակին (լիակատար ըմբռնելու, տեղեկութիւն գտնելու կամ հանոյժի համար)։
 - 2.3 Հիմնուելով ներկայացուած նիւթի գիտելիքներուն, գաղափարներուն, վերնագիրին, նկարներուն եւ բանալի նախադասութիւններուն վրայ, կարենալ կանխատեսումներ ընել եւ զանոնք քննութեան նիւթ դարձնել։
 - 2.4 Կարենալ գրութիւն մը համեմատել կամ հակադրել նախապէս ընթերցած նիւթերուն հետ։
 - 2.5 Բացատրական գրութեան մը մէջ կարենալ զանազանել պատճառը հետեւանքէն եւ փաստը՝ կարծիքէն։
 - 2.6 Կարենալ հետեւիլ քանի մը մասերէ բաղկացած գրաւոր հարցումի մը (առաւելագոյնը երեք մասերէ բաղկացած)։
- 3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան մանկական գրականութենէն առնուած զանազան կտորներ եւ իրենց կարծիքը կը ձեւաւորեն։ Անոնք կը կարողանան իրարմէ զանազանել նիւթին կառուցային եւ գրական տարրերը (թեման, պատումին նախագիծը [plot], միջավայրը եւ պատումին կերպարները)։

- 3.1 Կարենալ ցանչնալ ստեղծագործական գրականութեան տեսակները՝ թատրերգութիւն, առասպել, զրոյց, հեքիաթ, առակ, ինչպէս նաեւ անոնց ձեւերը՝ արձակ եւ չափածոյ։
- 3.2 Կարենալ ճշդորոշել նիւթին կարեւոր դէպքերը, անոնց պատճառները եւ իւրաքանչիւր դէպքին ազդեցութիւնը հետագայ գործողութիւններուն վրայ։
- 3.3 Հիմնուելով նիւթին մէջ նկարագրուած միջավայրին եւ իրադրութիւններուն վրայ ու դատելով հերոսին նկարագրային գիծերէն ու արարքներէն, կարենալ բացատրել հերոսին կատարած գործողութիւններուն դրդապատճառները։
- 3.4 Կարենալ ցանչնալ գրաւոր պատկերաւոր խօսքը կամ արտայայտութիւնը։

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններ եւ պարբերութիւններ, որոնք գլխաւոր գաղափար մը կը զարգացնեն: Աշակերտները կը յառաջանան գրաւոր խօսքի գործընթացով կամ հանգրուաններով (օրինակ՝ ուրուագրել, սեւագրել, սրբագրել եւ խմբագրել):

1.1 Գրել քանի մը պարբերութիւններէ բաղկացած շարադրութիւն մը՝

ա. որ ունենայ նախարան մը.

բ. գլխաւոր միտքը արտայայտող նախադասութիւն մը (topic sentence), որ կը գետնդուի անմիջապէս նախարանէն ետք.

գ. ընդգրկել օժանդակ նախադասութիւններ եւ պարբերութիւններ, որոնք մանրամասնութիւններով եւ բացատրութիւններով կը հիմնաւորեն գլխաւոր միտքը.

դ. պարբերութիւնները սկսիլ լուսանցքէն ներս տարածութեամբ.

1.2 Տեղեկութիւններ փոխանցելու համար հետեւիլ տրամաբանական կառուցուածքի մը (հերթականութիւն, պատճառ/հետեւանք, նմանութիւններ եւ տարբերութիւններ, հարցում մը ձեւակերպել եւ պատասխանել անոր).

1.3 Կարենալ գրել մաքուր, ընթեռնելի եւ համաչափ ձեւագիրով՝ պահելով լուսանցքները եւ տառերու, բառերու եւ նախադասութիւններու համաչափ տարածութիւնները.

1.4 Ուսումնասիրութեան ընթացքին կարենալ գտնել փնտռուած տեղեկութիւնը, նանչնալ ու նշել օգտագործուած աղբիւրները:

1.5 Գրաւոր խօսքը զարգացնելու համար կարենալ օգտագործել տեղեկատուական զանազան աղբիւրներ (օրինակ՝ բառարան, քարտէս, հանրագիտարան, համացանց, եւ այլն).

1.6 Կարենալ ստուգել սեւագրութիւնը, յաւելումներ կատարել, յապաւել՝ բարելաւելու համար գրութիւնը, միտքերու յաջորդականութիւնը եւ կապակցութիւնը.

1.7 Կարենալ գրել անձնական եւ պաշտօնական նամակներ, շնորհակալական գիրքեր եւ հրաւերներ (ընդգրկել թուականը, ողջոյնի խօսքը, նամակին կուռ բովանդակութիւնը (մարմինը), վերջաբանը եւ ստորագրութիւն):

2.0 Գրաւոր խօսքի կիրառութիւնները (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները կը գրեն շարադրութիւններ, որոնք կը նկարագրեն ծանօթ առարկաներ, իրադարձութիւններ եւ փորձառութիւններ: Անոնց գրութիւնը ցոյց կու տայ անոնց մօտ հայերէն լեզուի իմացութեան մակարդակը եւ ուսումնասիրելու, ուրուագրելու, խմբագրելու եւ սրբագրելու կարողութիւն:

2.1 Կարենալ գրել պատմողական շարադրութիւն (պատում)՝

ա. կարենալ դէպքի մը կամ փորձառութեան մը մասին գրաւոր արտայայտուիլ.

բ. զգացական մանրամասնութիւններով օժտել գրութիւնը.

գ. յաւելեալ բացատրութիւններով նշել, թէ ինչու՞ ընտրուած իրադարձութիւնը յիշարժան է.

2.3 Կարենալ տեղեկատուական գրաւոր զեկոյց մը պատրաստել՝

ա. օգտուիլ մէկէ աւելի տեղեկատուական աղբիւրներէ (գիրք, դասախօսութիւն, թերթ, համացանց).

բ. ընդգրկել զեկոյցի նպատակին ուղղուած փաստեր եւ մանրամասնութիւններ.

2.4 Գրել ընտրուած նիւթին ամփոփումը, որ կ'ընդգրկէ գլխաւոր գաղափարները եւ կարեւոր մանրամասնութիւնները.

Գրաւոր եւ բանաւոր խօսքի օրինաչափութիւն

Աշակերտները, իրենց դասարանի մակարդակին համաձայն կը գրեն եւ կը խօսին հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով:

1.1 Գրելու եւ խօսելու համար օգտագործել պարզ նախադասութիւններ.

1.2 Կարենալ կարճ նախադասութիւնները իրար միացնել շաղկապով.

1.3 Միտքը աւելի ամբողջական կերպով արտայայտելու համար կարենալ նախադասութիւն մը ընդարձակել՝ անոր մէջ օգտագործելով ածականներ, դերանուններ, մակբայեր:

Քերականութիւն

- 1.1 Բանաւոր եւ գրաւոր խօսքի մէջ կարեւնալ ցանչնալ եւ ցիշն գործածել խօսքի կարելոր մասերը՝ բայ (բայերուն ժամանակը, թիւը եւ դէմքը), գոյական (գոյականին տեսակները եւ պաշտօնները), դերանուն, ածական, (ածականին տեսակները), մակբայերը եւ շաղկապերը.
- 1.2 Բանաւոր եւ գրաւոր խօսքին մէջ յարգել բայի եւ ենթակայի համաձայնութեան օրէնքը.
- 1.3 Կարեւնալ ցանչնալ բառերու կազմութիւնը (պարզ, բարդ, ածանցաւոր).
- 1.4 Կարեւնալ ցանչնալ յօդերը (որոշիչ եւ անորոշ).
- 1.5 Կարեւնալ ցանչնալ հոմանիշ, հականիշ, բազմանիշ եւ նմանաձայն բառերը.
- 1.6 Կարեւնալ ցիշն ձեւով գործածել կէտադրութեան, բացայայտութեան եւ առոգանութեան նշանները.
- 1.7 Ճիշն ձեւով կիրարկել գլխագիրի գործածութիւնը: Գլխագիրով գրել ամսագիրի, թերթերու, արուեստի գործերու, երաժշտական ստեղծագործութիւններու, կազմակերպութիւններու անունները.
- 1.8 Գլխագիրով գրել աշխարհագրական տեղանունները, տօները, պատմական ժամանակաշրջանները եւ յատուկ իրադարձութիւնները.
- 1.9 Ճիշն ձեւով օգտագործել կէտադրական նշանները.
- 1.10 Վերաբաղ ընել ու վերյիշել նախորդ տարեշրջանին սորված օ եւ ո-ի, Ե եւ է-ի, վ, ռ եւ ու-ի ուղղագրական կանոնները.
- 1.11 Վերաբաղ ընել ու վերյիշել նախորդ տարեշրջանին սորված բառի վերջաւորութեան ոյ-ի եւ այ-ի գործածութեան օրէնքը.
- 1.12 Շարաքական սորվիլ դասարանին մէջ ներկայացուած ուղղագրական կանոններու հետ առնչուած շուրջ 15 բառեր.
- 1.13 Կարեւնալ բառերը այրեւնական կարգով շարել.
- 1.14 Կարեւնալ անսխալ գրել բառերու հոլովակերտ մասնիկները եւ իոնարհուած բայերու վերջաւորութիւնները, նախածանցներ եւ վերջածանցներ.
- 1.15 Սորվիլ յոգնակերտ մասնիկի ուղղագրական կանոնը.

Ունկնդրել եւ խօսիլ

Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանքեն անոր: Աշակերտներուն օգտագործած ռնր, նախադասութիւններու միշտ կառոյցը, ձայնի ելեւէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդիրին, հասկնալու համար նիւթին գլխաւոր գաղափարը:

- 1.1 Կարենալ բանաւոր մշակուած արտայայտութեամբ մտածուած հարցումներ ուղղել եւ նիւթին վերաբերող հարցումներուն պատասխանել.
 - 1.2 Կարենալ ամփոփել բանաւոր փոխանցուած պատգամին կամ ներկայացումի մը գլխաւոր գաղափարները.
 - 1.3 Կարենալ յստակ ուղղութիւններ եւ հրահանգներ տալ.
 - 1.4 Կարենալ յստակ եւ տպաւորիչ կերպով արտայայտուիլ՝ դիրացնելու համար ունկնդիրին կողմէ գլխաւոր գաղափարներուն ըմբռնումը.
 - 1.5 Տեղեկութիւններ փոխանցելու համար տրամաբանական կառուցուածքի հետեւիլ (հերթականութիւն, պատճառ/հետեւանք, նմանութիւններ եւ տարբերութիւններ, հարցում ուղղել եւ պատասխանել).
 - 1.6 Գաղափարներ արտայայտելու ընթացքին օգտագործել յստակ եւ մշտնջենք բառապաշար եւ յարմար ռն.
 - 1.7 Տեղեկութիւն մը յստակացնելու համար օգտագործել օրինակներ եւ անձնական փորձառութիւն.
 - 1.8 Օգտագործել յարմար առոգանութիւն, ձայնի ելեւէջներ եւ ձեւեր շարժումներ՝ իմաստը աւելի հասկնալի դարձնելու համար.
- 2.0 Խօսքի կիրառութիւններ (ռն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները պէտք է կարենան իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին հակիրճ բանաւոր ներկայացում կատարել, որ կազմակերպուած ըլլայ մէկ նիւթի շուրջ: Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ հայերէն լեզուի ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը:

Լսելու եւ խօսելու թիւ 1.0-ի մէջ բերուած strategy-ները օգտագործելով աշակերտները՝

- 2.1 Աշակերտները կ'ունենան կարն պատմողական ելոյթներ՝

ա. Անոնք պէտք է կարենան դէպքի կամ փորձառութեան մը մասին գաղափար յայտնել, յիշողութիւն մը արձանագրել կամ դիտարկում մը կատարել.

բ. յաւելեալ բացատրութիւններով նշել, թէ ինչն՞ է ընտրուած իրադարձութիւնը յիշարժան է.

2.2 Կարենալ տեղեկատուական բանաւոր գեկոյց մը ներկայացնել՝

ա. ներկայացնելով փաստեր եւ մանրամասնութիւններ՝ ունկնդիրին ուշադրութիւնը գեկոյցի նիւթին վրայ հրաւիրելու համար.

բ. օգտուիլ մէկէն աւելի տեղեկատուական աղբիւրներէ (գիրք, դասախօսութիւն, թերթ, հեռուստատեսութիւն, համացանց).

2.3 Բանաւոր կերպով ներկայացնել յօդուածի մը կամ գրքի մը ամփոփումը, որ կ'ընդգրկէ գլխաւոր գաղափարները եւ կարեւոր մանրամասնութիւնները.

2.4 Արտասանել կարճ բանաստեղծութիւններ (2-3 տուն), մենախօսութիւններ եւ թատերական երկխօսութիւններ՝ գործածելով յստակ առոգանութիւն, կշռոյթի եւ ձայնի ելեւէջներու համապատասխան արտայայտչականութիւն:

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Հինգերորդ Դասարան

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում, ընթերցանութեան սահունութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում.

Աշակերտները կ'օգտագործեն բառերու արմատներուն եւ անոնց իրարու հետ ունեցած յարաբերութեան (կապակցութեան) մասին իրենց ունեցած գիտելիքները, կարենալ հասկնալու համար իրենց համար անծանօթ բառերուն իմաստը:

- 1.1 Դասարանի մակարդակին համապատասխան սահուն եւ ճշգրիտ կերպով կարենալ կարդալ (մտովի կամ բարձրաձայն) նկարագրական եւ բացատրական գրութիւններ՝ նիւթին յարմար կշռոյթով, հնչերանգներով եւ արտայայտչական միջոցներով.
- 1.2 Կարենալ հասկնալ եւ բացատրել յանախ գործածուող հումանիշ, հականիշ, բազմանիշ եւ նմանաձայն բառերը.
- 1.3 Կարենալ հասկնալ բառերուն փոխաբերական եւ պատկերաւոր գործածութիւնը գրութեան մը մէջ.

2.0 Ընթերցանութեան ըմբռնում (ուշադրութիւն՝ տեղեկատուական նիւթերուն վրայ).

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք կը բացատրեն եւ իրարու կը կապեն գրութեան գլխաւոր միտքերը, տեղեկութիւնները, օգտագործելով գրութեան կառոյցին եւ նպատակին մասին իրենց ձեռք բերած գիտելիքները:

- 2.1 Հասկնալ, թէ ինչպէս գրութեան մը իւրայատկութիւնները (ձեւը, դէպքերու յաջորդականութիւնը, գծագրութիւնները, նկարները, քարտէսները) կրնան զայն դիւրամատչելի դարձնել.
- 2.2 Կարենալ վերլուծել գրութիւն մը, որ հերթականութեան կամ ժամանակագրական կարգի վրայ կառուցուած է.
- 2.3 Ճանչնալ գրութեան մը գլխաւոր գաղափարները եւ նշել ու արժեւորել զանոնք հիմնաւորող փաստերը.
- 2.4 Կարենալ գրութեան մը մասին հետեւութիւններ, եզրակացութիւններ կամ ընդհանրացումներ կատարել եւ զանոնք հիմնաւորել գրութեանէն

փաղած կամ նախապէս ստացած գիտելիքներով.

2.5 Գրութեան մը մէջ զանազանել փաստերը եւ կարծիքները.

3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան պատմական եւ մշակութային արժէք ունեցող գրականութիւն: Անոնք կ'օգտագործեն ցարդ իրենց սորված գիտելիքները, որպէսզի կարենան ըմբռնել գաղափարները (մտքերը) եւ կապեր գտնել գրական գործերու մէջ:

3.1 Կարենալ զատորոշել եւ վերլուծել բանաստեղծութեան, թատերգութեան, գեղարուեստական արձակի եւ ոչ-գեղարուեստական արձակի իւրայատկութիւնները:

3.2 Կարենալ ճշդորոշել նիւթին մէջ ներկայացուող գլխաւոր բախումը (conflict) կամ հարցը (problem) եւ բացատրել տրուած լուծումը.

3.3 Կարենալ ճանչնալ պատումի մը հերոսներուն նկարագրային գիծերը եւ զանոնք կապել իրենց գործած արարքներուն եւ գրութեան հիմնական նիւթին.

3.4 Կարենալ գրական կտորի մը մէջ ճանչնալ նիւթը.

3.5 Բացատրել գրական արտայայտչական տարրեր միջոցները (պատկերաւոր արտայայտութիւն եւ խորհրդանիշներ/symbolsm)

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններով ու պարբերութիւններով շարադրութիւններ, որոնք գլխաւոր գաղափար մը կը զարգացնեն: Անոնց գրաւոր խօսքը ցոյց կու տայ թէ նկատի առնուած են ունկնդիրը եւ գրելու նպատակը: Շարադրութիւնները կ'ունենան նիւթը ներկայացնող նախարան, հիմնաւորող փաստեր եւ եզրակացութիւն: Աշակերտները կը հետեւին գրաւոր խօսքի ծանօթ հանգրուաններուն:

1.1 Գրել ֆանի մը պարբերութիւններէ բաղկացած պատմողական շարադրութիւն՝

ա. որ ունենայ նախարան մը.

բ. գլխաւոր միտքը արտայայտող նախադասութիւն մը (topic sentence), որ կը զետեղուի անմիջապէս նախարանէն ետք.

գ. ընդգրկել օժանդակ նախադասութիւններ եւ պարբերութիւններ, որոնք մանրամասնութիւններով եւ բացատրութիւններով կը հիմնաւորեն գլխաւոր միտքը.

դ. ստեղծել եւ զարգացնել իրավիճակ մը կամ գործողութեան ծրագիր մը (plot).

ե. նկարագրել միջավայրը.

զ. ներկայացնել վերջաբան մը.

է. Տեղեկութիւններ փոխանցելու համար հետեւիլ տրամաբանական կառուցուածքի (հերթականութիւն, պատճառ/հետեւանք, նմանութիւններ եւ տարբերութիւններ, հարցում մը ձեւակերպել եւ պատասխանել անոր).

ը. Կարենալ գրել մտքեր, ընթեռնելի եւ համաչափ ձեռագրով՝ պահելով լուսանցքները եւ տառերու, բառերու եւ նախադասութիւններու համաչափ տարածութիւնները.

թ. պարբերութիւնները սկսիլ լուսանցքէն ներս տարածութեամբ.

1.2 Գրել ֆանի մը պարբերութիւններէ բաղկացած բացատրական շարադրութիւն՝

ա. որոշել նիւթը, գլխաւոր միտքերը կամ դէպքերը իրենց ժամանակագրական հերթականութեամբ.

բ. ներկայացնել մանրամասնութիւններ եւ գործածել պարբերութիւնները շաղկապող անցման արտայայտութիւններ՝ միտքի եւ իմաստի տրամաբանական զարգացումը ապահովելու համար.

գ. ներկայացնել վերջարան պարբերութիւն մը, որ կ'ամփոփէ կարեւոր միտքերը եւ մանրամասնութիւնները.

1.3 Ուսումնասիրութեան ընթացքին կարենալ գտնել փնտռուած տեղեկութիւնը, նանչնալ ու նշդել օգտագործուած աղբիւրները.

1.4 Գրաւոր խօսքը զարգացնելու համար կարենալ օգտագործել տեղեկատուական զանազան աղբիւրներ (օրինակ՝ քառարան, քարտէս, հանրագիտարան, համացանց).

1.5 Կարենալ քառարան գործածել, քառերու գործածութեան մէջ այլընտրանք ունենալու համար.

1.6 Ստուգել սեւագրութիւնը եւ ի հարկին յաւելում կատարել, յապաւել, քառերու եւ նախադասութիւններու տեղերը շարժել՝ քարելաւելու համար գրութիւնը, անոր իմաստը եւ նպատակաուղղուածութիւնը.

Աշակերտները կը գրեն պատմողական, քացատրողական, եւ նկարագրական շարադրութիւններ: Անոնց գրութիւնը ցոյց կու տայ հայերէն լեզուի իմացութեան մակարդակը եւ ուսումնասիրելու, ուրուագրելու, սրբագրելու եւ խմբագրելու կարողութիւն:

2.1 Կարենալ գրել պատմողական շարադրութիւն (պատում)՝

ա. ստեղծել գործողութիւններու նախագիծ (plot) եւ միջավայր.

բ. պատմութեան դէպքերը ներկայացնել եւ ո՛չ թէ պատմել.

2.2 Գրական վերլուծում կատարել

ա. գրական գործ մը կարենալ ըմբռնել եւ նախապէս սորված գիտելիքները օգտագործելով՝ այդ մասին կարենալ գրաւոր արտայայտուիլ.

բ. դատումները հիմնաւորել թէ՛ գրական գործին եւ թէ՛ նախապէս ունեցած գիտելիքներուն յղումներ կատարելով.

գ. զարգացնել մեկնաբանութիւններ, որոնք բխած պիտի ըլլան ուշադիր ընթերցանութենէն եւ ըմբռնումէն.

2.3 Կարենալ ուսումնասիրական գրաւոր գեկոյց մը պատրաստել կարեւոր գաղափարներու, հարցերու կամ դէպքերու մասին, հետեւելով վարի

ուղղութիւններուն.

ա. ընդգծել եւ նշել ուսումնասիրութեան գլխաւոր հարցերը.

բ. հիմնաւորել գլխաւոր գաղափարը կամ նիւթը.

գ. նիւթը զարգացնել փաստերով, մանրամասնութիւններով, օրինակներով եւ բացատրութիւններով.

2.4 Կարենալ գրել անձնական եւ պաշտօնական նամակներ, շնորհակալական գիրքեր եւ հրաւերներ (ընդգրկել թուականը, ողջոյնի եւ վերջաբանի խօսքերը, նամակին կուռ բովանդակութիւնը (մարմինը) եւ ստորագրութիւնը): Այս մէկը հաւանաբար տանիլ նաեւ Դ կարգ:

Գրաւոր եւ բանաւոր խօսքի օրինաչափութիւն

Աշակերտները, իրենց դասարանի մակարդակին համաձայն, կը գրեն եւ կը խօսին հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով:

1.1 Գրելու եւ խօսելու համար օգտագործել պարզ նախադասութիւններ.

1.2 Կարենալ կարճ նախադասութիւնները իրարու միացնել շաղկապով.

1.3 Միտքը աւելի ամբողջական կերպով արտայայտելու համար, կարենալ նախադասութիւն մը ընդարձակել՝ անոր մէջ օգտագործելով ածականներ, դերանուններ, մակրայեր եւ լեզուական այլ այլ տարրեր.

Քերականութիւն

- 1.1 Վերաբաղ ընել եւ վերլիշել Դ կարգին մէջ սորված քերականական կանոնները:
- 1.2 Հանչնալ պարզ, բարդ, ածանցաւոր, բարդածանց, կնկնածանց բառերը եւ անոնց կազմութիւնը.
- 1.3 Հանչնալ հոմանիշ, հականիշ, բազմանիշ եւ նմանաձայն բառերը.
- 1.4 Հանչնալ խօսքին մասերը՝
 - ա. բային եղանակը (սահմանական եւ հրամայական) թիւը, դէմքը, նաեւ բային ժխտական ձեւը.
 - բ. գոյական (տեսակը, թիւը, յօդը, հոլովը, պաշտօնը).
 - գ. դերանուն՝ (անձնական, թիւ, դէմք, հոլով, պաշտօն).
 - դ. ածական (տեսակ), մակբայ (տեսակ).
 - ե. մակբայ
 - զ. շաղկապ
 - է. ձայնարկութիւն
- 1.5 Բանաւոր եւ գրաւոր խօսքի մէջ յարգել բային եւ ենթակային համաձայնութեան կանոնը.
- 1.6 Հանչնալ յօդերը (որոշիչ եւ անորոշ).
- 1.7 Կարենալ ճիշդ ձեւով գործածել կէտադրութեան, բացայայտութեան եւ առոգանութեան նշանները.
- 1.8 Վերաբաղ ընել եւ վերլիշել Դ կարգին մէջ սորված ուղղագրական կանոնները:
- 1.9 Ճիշդ ձեւով կիրարկել գլխագիրի գործածութիւնը: Գլխագիրով գրել ամսագիրի, թերթերու, արուեստի գործերու, երաժշտական ստեղծագործութիւններու, կազմակերպութիւններու անունները, ինչպէս նաեւ՝ աշխարհագրական տեղանունները, տօները, պատմական ժամանակաշրջանները եւ յատուկ իրադարձութիւնները:
- 1.10 Վերաբաղ ընել ու վերլիշել նախորդ տարեշրջանին սորված օ եւ ո-ի, ք

եւ է-ի, վ, ւ եւ ու-ի ուղղագրական կանոնները.

- 1.11 Վերաբաղ ընել ու վերյիշել նախորդ տարեշրջանին սորված բառի վերջաւորութեան ոյ-ի եւ այ-ի գործածութեան օրէնքը:
- 1.12 Շարաքական սորվիլ դասարանին մէջ ներկայացուած ուղղագրական կանոններու հետ առնչուած շուրջ 25 բառեր.
- 1.13 Կարեւալ բառերը այբենական կարգով շարել.
- 1.14 Հանչնալ տողադարձի օրէնքները.
- 1.15 Սորվիլ բառին սկիզբը եւ վերջը լսուող եւ եւ է ձայներուն պարագան (աւելի մանրամասն).
- 1.16 Վ, ւ եւ ու-ի օրէնքները (աւելի մանրամասն).
- 1.16 Բաղաձայն տառերու օրէնքները՝ յ-հ, ր-փ, ր-ն, ձ-ց, գ-ֆ, դ-թ, չ-ջ (ընդհանուր գիծերու մէջ ծանօթացնել կանոնը).
- 1.18 Բարդումի եւ անանցումի ընթացքին եղած սղումներն ու փոփոխութիւնները.
- 1.19 յ տառին գործածութիւն՝ բառին սկիզբը, մէջտեղը եւ վերջաւորութեան (ընդհանուր գիծերու մէջ ծանօթացնել կանոնը).
- 1.20 Կարեւալ անսխալ գրել բառերու հուլովակերտ մասնիկները եւ խոնարհուած բայերու վերջաւորութիւնները, նախածանցներ եւ վերջածանցներ.

Ունկնդրել եւ խօսիլ

Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանքեն անոր: Աշակերտներուն օգտագործած ոճը, նախադասութիւններու միջոց կառոյցը, ձայնի ելեւէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդիրին հասկնալու համար նիւթին գլխաւոր գաղափարը:

- 1.1 Ուղղել հարցումներ՝ ստանալու համար տեղեկութիւն, որ տակաւին չէ արծարծուած.
- 1.2 Կարեւալ մեկնաբանել խօսողին կողմէ անուղղակի կերպով արտայայտուած միտքը:
- 1.3 Բանաւոր զեկոյցի մը վրայ կարեւալ հետեւութիւններ ընել կամ եզրակացութիւններու հանգիլ.

1.4 Բանաւոր ելոյթի մը համար ընտրել նպատակ եւ կազմակերպչական կառոյց.

1.5 Բանաւոր արտայայտած միտքերը հիմնաւորել փաստերով եւ օրինակներով.

1.6 Ունկնդիրներուն ուշադրութիւնը կեդրոնացած պահել ազդեցիկ արտայայտութիւններով, դէմքի արտայայտչականութեամբ եւ շարժումներով.

2.0 Խօսքի կիրառութիւններ (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները պէտք է կարենան իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին բանաւոր ներկայացում կատարել, որ կազմակերպուած ըլլայ մէկ նիւթի շուրջ: Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ հայերէն լեզուի ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը:

Լսելու եւ խօսելու թիւ 1.0-ի մէջ բերուած strategy-ները օգտագործելով աշակերտները՝

2.1 Կ'ունենան պատմողական ելոյթներ՝

ա. ունենալ գործողութիւններու նախագիծ (plot), միջավայր եւ օգտագործել նկարագրական բառեր ու դարձուածքներ.

բ. պատմութեան դէպքերը ունկնդրին ներկայացնելով եւ ո՛չ թէ պատմելով.

2.2 Կարենալ տեղեկատուական բանաւոր ելոյթ մը պատրաստել կարելու գաղափարներու, հարցերու կամ դէպքերու մասին՝ հետեւելով վարի միջոցներուն.

ա. ընդգծել եւ նշել գլխաւոր հարցերը, որոնք ուսումնասիրութիւնը կ'առաջնորդեն.

բ. հիմնաւորել գլխաւոր գաղափարը կամ նիւթը.

գ. նիւթը զարգացնել փաստերով, մանրամասնութիւններով, օրինակներով եւ բացատրութիւններով.

2.3 Բանաւոր գրական վերլուծում կատարել՝

ա. ամփոփել գրական գործին կարելու դէպքերը եւ մանրամասնութիւնները.

բ. կարենալ ըմբռնել գրական գործին արտայայտած միտքերը եւ պատկերները ու զանոնք ներկայացնել.

գ. եզրակացութիւնները հիմնաւորել գրութեան առնուած փաստերով.

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Վեցերորդ Դասարան

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում, ընթերցանութեան սահունութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում

Աշակերտները կ'օգտագործեն բառերու արմատներուն եւ անոնց իրարու հետ ունեցած յարաբերութեան (կապակցութեան) մասին իրենց ունեցած գիտելիքները, կարենալ հասկնալու համար իրենց համար անծանօթ բառերուն իմաստը:

- 1.1 Դասարանի մակարդակին համապատասխան սահուն եւ ճշգրիտ կերպով կարենալ (մտովի կամ բարձրաձայն) կարդալ նկարագրական եւ բացատրա-կան գրութիւններ՝ նիւթին յարմար կշռոյթով, հնչերանգներով եւ արտայայտչական միջոցներով.
- 1.2 Կարենալ գրականութեան մէջ ճանչնալ եւ մեկնարանել պատկերաւոր լեզուն եւ փոխաբերական իմաստով կատարուած արտայայտութիւնները:
- 1.3 Բացատրական գրութիւններուն մէջ բառի գործածութեան, նախադասութեան կամ պարբերութեան իմաստին ընդմէջէն փորձել հասկնալ անծանօթ կամ տարբեր իմաստով գործածուած բառերուն նշանակութիւնը:
- 1.4 Կարենալ հասկնալ մօտիկ իմաստ ունեցող բառերուն իմաստային նրբերանգները (օրինակ՝ մեղմ-դանդաղ, մեծ-խոշոր-հսկայ).

2.0 Ընթերցանութեան ըմբռնում (ուշադրութիւն՝ տեղեկատուական նիւթերուն վրայ).

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք կը բացատրեն եւ իրարու կը կապեն գրութեան գլխաւոր միտքերը, փաստարկութիւնները օգտագործելով իրենց գիտելիքները գրութիւններու կառոյցին եւ նպատակին մասին:

- 2.1 Կարենալ ճանչնալ գրաւոր լրատուական աղբիւրները (օրաթերթ, պարբերաթերթ եւլն.) եւ օգտուիլ անոնցմէ տեղեկութիւններ փողելու համար:
- 2.2 Կարենալ վերլուծել գրութիւն մը, որ համեմատութիւն-հակադրութիւն ձեւին վրայ կառուցուած է.

- 2.3 Կարենալ յստակացնել եւ իրար կապել գրութեան մը գլխաւոր գաղափարները, ընդգծելով այլ աղբիւրներու կամ նման նիւթերու հետ անոնց ունեցած առնչութիւնը.
- 2.4 Գրութեան մը ըմբռնումը խորացնել, այդ նիւթին մասին ստեղծելով ուրուզիծ, տրամաբանական նշումներ, ամփոփում կամ զեկոյց.
- 2.5 Կարենալ որոշել, թէ գրութեան մը մէջ հեղինակին եզրակացութեան համար բաւարա՞ր են կամ համապատասխա՞ն են անոր ներկայացուցած տուեալները.
- 2.6 Գրութեան մը մասին կարենալ կարծիքներ կամ տեսակէտներ արտայայտել, մեկնելով անոր բովանդակութենէն:

3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան պատմական եւ մշակութային արժէք ունեցող գրականութիւն, որ կը հարստացնէ անոնց մտաւոր հորիզոնը: Անոնք յստակօրէն կ'ըմբռնեն գաղափարները (միտքերը) եւ կը գտնեն անոնց առնչութիւնը այլ գրական գործերու հետ:

- 3.1 Կարենալ ճանչնալ գեղարուեստական արձակին տարբեր տեսակները:
- 3.2 Վերլուծել գլխաւոր հերոսին յատկանիշներուն (փառութիւն, բարութիւն, ընկերասիրութիւն, ազնուութիւն, վախկոտութիւն, ծուլութիւն, եւլն.) ազդեցութիւնը գործողութիւններու նախագիծին (plot) եւ թննուկին (conflict) լուծման վրայ.
- 3.3 Վերլուծել միջավայրին ազդեցութիւնը ներկայացուած խնդիրին եւ անոր լուծման վրայ.
- 3.4 Կարենալ պարզ գրական կտորի մը մէջ ճանչնալ ներկայացուած հիմնական նիւթը:
- 3.5 Բացատրել բանաստեղծութեան ոճը եւ իմաստը, հիմնուելով բառերու ընտրութեան, պատկերաւոր լեզուին, նախադասութեան կառոյցին, տողի երկարութեան, կէտադրութեան, ոտքերուն եւ յանգերուն վրայ:
- 3.6 Հանչնալ պատումին խօսողը (պատմողը) եւ առաջին եւ երրորդ դէմքերու կողմէ պատմուածը (օր.՝ ինքնակենսագրութիւնը եւ կենսագրութիւնը).
- 3.7 Բացատրել գրական միջոցներու (խորհրդապաշտութիւն-Symbolism-, պատկերաւոր արտայայտութեան -Metaphor-) ազդեցութիւնը գեղարուեստական եւ ոչ-գեղարուեստական գրութիւններուն մէջ.
- 3.8 Քննութեան ենթարկել թէ որքա՞ն համոզիչ կերպով մշակուած են կերպարները եւ որքանո՞վ երեւակայական կամ իրապաշտ է նախագիծը (plot)ը:

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններով ու պարբերութիւններով շարադրութիւններ: Անոնց գրաւոր խօսքը ցոյց կու տայ թէ նկատի առնուած են ունկնդիրը եւ գրելու նպատակը: Շարադրութիւնները կ'ունենան նիւթը ներկայացնող նախարան, հիմնաւորող փաստեր եւ եզրակացութիւն: Աշակերտները կը յառաջանան գրաւոր խօսքի գործընթացով կամ հանգրուաններով:

1.1 Ընտրել այն գրելաձեւը, որ լաւագոյնս կը համապատասխանէ մտադրուած նպատակին (անձնական նամակ, նամակ խմբագրին, բանաստեղծութիւն, գեկուցում, պատմուածք):

1.2 Գրել քանի մը պարբերութիւններէ բաղկացած բացատրողական շարադրութիւն՝

ա. ընթերցողին հետաքրքրութիւնը շարժել եւ յստակ նպատակ մը արտայայտել.

բ. նիւթը զարգացնել հիմնաւորող մանրամասնութիւններով, եւ նշգրիտ բայերով, գոյականներով եւ ածականներով՝ ընթերցողի միտքին մէջ յստակ պատկեր մը ստեղծելու համար.

գ. նիւթը եզրափակել մանրամասն ամփոփումով, որ հաստատէ շարադրութեան նպատակը.

1.3 Կարենալ գտնել փնտռուած տեղեկութիւնը օգտագործելով համակարգիչ եւ համացանց.

1.4 Կարենալ թղթածրարներ կազմել՝ հետեւելով անոր ձեւային եւ բովանդակային առանձնայատկութիւններուն.

1.5 Կարենալ վերստուգել սեւագրութիւնը՝ բարելաւելու համար գրութեան կազմակերպուածութիւնը եւ միտքերու հետեւողականութիւնը պարբերութիւններու մէջ եւ անոնց միջեւ.

2.0 Գրաւոր խօսքի կիրառութիւնները (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները կը գրեն պատմողական, բացատրողական, համոզիչ եւ նկարագրական շարադրութիւններ շուրջ նուազագոյնը 300 բառերէ կազմուած: Անոնց գրութիւնը ցոյց կու տայ հայերէն լեզուի իմացութիւն եւ ուսումնասիրելու, ուրուագրելու եւ սրբագրելու կարողութիւն:

2.1 Կարենալ գրել պատմողական շարադրութիւն (պատում)՝

ա. ստեղծել գործողութիւններու նախագիծ (plot) եւ միջավայր.

բ. ընդգրկել զգացական մանրամասնություններ եւ օգտագործել յստակ լեզու՝ պատմության նախագիծը plot-ը եւ կերպարները զարգացնելու համար.

գ. օգտագործել պատմողական տարրեր միջոցներ (խօսակցություն, նկարագրություն).

2.2 Կարենալ գրել բացատրողական շարադրություն (բացատրություն, համեմատություն եւ հակադրություն, խնդիր եւ լուծում).

ա. ներկայացնել թեզը կամ նպատակը.

բ. դրությունը բացատրել.

գ. հաստատումները եւ եզրակացությունները հիմնավորող համոզիչ փաստեր բերել.

2.3 Կարենալ հետազոտական գրաւոր գեկոյց մը պատրաստել՝

ա. դնել պարզ հարցեր, որպէսզի հնարաւոր ըլլայ անոնց պատասխանները կամ բացատրությունը տալ լիովին.

բ. գլխաւոր գաղափարը կամ միտքերը հիմնաւորել փաստերով, մանրամասնություններով, օրինակներով եւ բացատրություններով, որոնք բերուած ըլլան հեղինակութիւն ունեցող տարրեր աղբիւրներէ (բանախօսներ, յօդուածներ, գիրքեր, պարբերականներ, համացանց).

գ. ընդգրկել օգտագործուած աղբիւրներու ցանկ.

Գրաւոր եւ Բանաւոր Խօսքի Օրինաչափութիւն

Աշակերտները, իրենց դասարանի մակարդակին համաձայն, կը գրեն եւ կը խօսին հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով:

1.1 Բանաւոր եւ գրաւոր խօսքի մէջ կարենալ գործածել պարզ եւ բարդ նախադասություններ, ամբողջական միտք մը արտայայտելու համար.

Քերականութիւն

- 1.1 Վերաբաղ ընել հետեւեալ նիւթերուն շուրջ.-
 - այբուբեն – ձայնաւոր – բաղաձայն – երկհնչիւններ
 - արմատ – ածանց (նախածանց, վերջածանց)
 - յօդեր (անորոշ, որոշիչ)
 - գոյական (եզակի, յոգնակի)
 - գոյականի հոլովներ (7 հոլով)
 - ածական
 - դերանուն
 - բայ (դէմք, թիւ, ժամանակ, օժանդակ բայ)
 - բայի եղանակներ (խոնարհում)
- 1.2 Գիտնալ եւ նիշդ օգտագործել անորոշ դերանունները.
- 1.3 Յարգել բային եւ ենթակային համաձայնութեան կանոնը.
- 1.4 Գիտնալ բային ներկայ, անցեալ, ապառնի, անկատար ձեւերը.
- 1.5 Վերաբաղ ընել կէտադրութեան կանոնները.
- 1.6 Կարենալ նիշդ ձեւով գործածել կէտադրութեան, բացայայտութեան եւ առոգանութեան նշանները.
- 1.6 Կախման կէտեր, չակերտ, բութ, շեշտ, հարցական նշան, գծիկ, երկարացման նշան.
- 1.7 Գլխագրի նշգրիտ գործածութիւն.
- 1.8 Կարգ մը բաղաձայններու օրէնքներ (սպ, շտ, գբ, գգ,).
- 1.9 Տողադարձի օրէնքներ
- 1.10 Սուղ ը-ի պարագան՝ վանկերու բաժանման եւ տողադարձի ժամանակ.
- 1.11 Բաղաձայն տառերու օրէնքները՝ յ-հ, ք-փ, ք-ո, ձ-ց, գ-ֆ, դ-թ, չ-ջ.
- 1.12 Յոգնակերտ մասնիկի ուղղագրական կանոն (եր, ներ, ֆ).

Ունկնդրել եւ խօսիլ

Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանքեն անոր: Աշակերտներուն օգտագործած ռըր, նախադասութիւններու նիշդ կառոյցը, ձայնի

Ելեւէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդիրին հասկնալու համար նիւթին գլխաւոր գաղափարը:

- 1.1 Խօսողին բառացի արտայայտութիւնը (բառերու ընտրութիւն, ձայնի ելեւէջ, զգացականութիւն) կապել անոր ֆիզիքական արտայայտութեան (կեցուածք, շարժումներ):
- 1.2 Կարենալ ցանչնալ բանաւոր խօսքին ոճը, տրամադրութիւնը, զգացումը:
- 1.3 Կարենալ գործադրել քանի մը հանգրուաններէ բաղկացած բանաւոր հրահանգ մը (առաւելագոյնը 3 հանգրուաններով):
- 1.4 Բանաւոր ելոյթի մը համար ընտրել նպատակ, կազմակերպչական կառոյց եւ ձայնային ձեւաւորումը պատշանցնել ունկնդիրներուն:
- 1.5 Բանաւոր արտայայտած մտքերը հիմնաւորել փաստերով եւ օրինակներով:
- 1.6 Շեշտադրել գլխաւոր կէտերը օգնելու համար ունկնդիրներուն՝ հասկնալու գլխաւոր միտքը:
- 1.7 Ունկնդիրներուն ուշադրութիւնը եւ հետաքրքրութիւնը լարուած պահել ազդեցիկ արտայայտութիւններով, դէմքի արտայայտչականութեամբ եւ շարժումներով:
- 1.8 Վերլուծել մարտասանական տարրերը (ոիթմ, կրկնութիւններ, բնութեան ձայներէն առնուած բառեր), որոնք գործածուած են ազդեցութիւն մը գործելու եւ նպատակը իրագործելու համար:

2.0 Խօսքի կիրառութիւններ (ոճ եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները պէտք է կարենան իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին բանաւոր ներկայացում կատարել, որ կազմակերպուած ըլլայ մէկ նիւթի շուրջ: Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ հայերէն լեզուի ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը:

Լսելու եւ խօսելու թիւ 1.0-ի մէջ բերուած strategy-ները օգտագործելով աշակերտները՝

2.1 Կ'ունենան պատմողական ելոյթներ՝

- ա. ստեղծել բովանդակութիւն, գործողութիւններու նախագիծ (plot), եւ միջավայր. բ. ընդգրկել զգացական մանրամասնութիւններ եւ յստակ լեզու՝ պատմութեան նախագիծ plot-ը եւ կերպարները զարգացնելու համար:
- գ. օգտագործել պատմողական տարրեր միջոցներ (խօսակցութիւն, նկարագրութիւն, լարուածութիւն, սպասողական վիճակ):

2.2 Կարենալ տեղեկություն փոխանցող բանաւոր ելոյթ մը պատրաստել.

ա. սահմանափակ հարցադրումներ կատարել, որպէսզի հնարաւոր ըլլայ բոլորին պատասխանները ընդգրկել.

բ. նիւթը զարգացնել պարզ փաստերով, մանրամասնութիւններով, օրինակներով եւ բացատրութիւններով, որոնք առնուած ըլլան հեղինակութիւն ունեցող տարբեր աղբիւրներէ (բանախօսութիւն, յօդուած, գիրք, պարբերաթերթեր, համացանց).

2.3 Բանաւոր գրական վերլուծում կատարել

ա. զարգացնել այնպիսի մեկնարանութիւն՝ որ ցոյց կու տայ ուշադիր ընթերցում, ըմբռնում եւ գիտելիքներու իւրացում.

բ. մեկնարանութիւնը կազմակերպել քանի մը յստակ միտքերու, հետեւութիւններու եւ պատկերներու վրայ.

գ. մեկնարանութիւնը զարգացնել եւ պատճառաբանել հաստատուն օրինակներով եւ գրութեան կատարուած յղումներով.

2.4 Բանաւոր համոզիչ ելոյթ պատրաստել.

ա. յստակ դիրքորոշում ունենալ.

բ. նիւթին առնչուող ապացոյցներ ներկայացնել.

գ. տեղեկութիւններուն տալ տրամաբանական հերթականութիւն.

դ. ունկնդրի ուշադրութիւնը կարենալ լարուած պահել եւ յաջողիլ զայն համոզել:

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Եօթերորդ Դասարան

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում, ընթերցանութեան սահունութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում

Աշակերտները կ'օգտագործեն բառերու արմատներուն եւ անոնց իրարու հետ ունեցած յարաբերութեան (կապակցութեան) մասին ունեցած գիտելիքները, կարենալ հասկնալու համար անծանօթ բառերուն իմաստը:

1.1 Արձակի եւ բանաստեղծութեան մէջ կարենալ ճանչնալ դարձուածքները, փոխաբերական իմաստով կատարուած արտայայտութիւնները (Metaphor) եւ նմանութիւնը.

1.2 Հասկնալ բառի մը իմաստը եւ կարենալ գայն նախադասութեան մէջ գործածել.

2.0 Ընթերցանութեան ըմբռնում (ուշադրութիւնը՝ տեղեկատուական նիւթերուն վրայ)

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք կը բացատրեն եւ իրարու կը կապեն գրութեան գլխաւոր միտքերը, օգտագործելով իրենց գիտելիքները գրութեան կառոյցին եւ նպատակին մասին: Եօթերորդ կարգէն սկսեալ աշակերտները զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն ընթերցանութեան մէջ. անոնք օրաթերթ, պարբերականներ եւ գրական կարն ստեղծագործութիւններ կը կարդան: Աշակերտները տարուան ընթացքին գոց կը սորվին նուագագոյնը երեք ֆերթուած, որոնք վերցուած կրնան ըլլալ դասագիրքէն կամ անկէ դուրս: Քերթուածներուն նիւթը յանձնարարելի է, որ ըլլայ հայրենասիրական եւ կամ ազնիւ նպատակներու ձօնուած:

2.1 Կարենալ վերլուծել այն գրութիւնները, որոնց մէջ օգտագործուած է պատմաւ/հետեւանք կառուցուածքը.

2.2 Գրութեան մը մէջ կարենալ գատորոշել հեղինակին ներկայացուցած տուեալները, յայտնած տեսակէտը, ընտրած մօտեցումը ու կարենալ հետեւիլ անոնց զարգացումին.

3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան պատմական եւ մշակութային արժէք ունեցող գրականութիւն, որ կը հարստացնէ պատմութեան եւ ընկերային գիտութեան մասին անոնց գիտելիքները: Անոնք յստակօրէն կ'ըմբռնեն գաղափարները (մտքերը) եւ կը գտնեն անոնց առնչութիւնը այլ գրական գործերու հետ: Աշակերտները կը սորվին գրական սեռերու մասին, օրինակ՝ առակ, առած, հէֆիաթ, առասպել, բանաստեղծութիւն, պատմուածք, վէպ, վիպակ:

- 3.1 Կարենալ բացատրել արձակ գործերու մէջ արտայայտուած գլխաւոր միտքը եւ ժանրային իւրայատկութիւնները (օր.՝ պատմուածք, վէպ, վիպակ, ակնարկ)։
- 3.2 Կարենալ նշել այն դէպքերը՝ որոնք գործողութիւններու նախագիծը (plot) առաջ կը տանին եւ կը բացատրեն զանոնք։
- 3.3 Վերլուծել գրական գործի մը կերպարներուն յատկանիշները, հետեւելով անոնց մտածումներու եւ գործողութիւններու զարգացման։
- 3.4 Կարենալ հասկնալ եւ վերլուծել գրական գործերու մէջ ներկայցուող մարդկային առաքինութիւնները եւ վսեմ գաղափարները (օրինակ՝ փառութեան, հաւատարմութեան եւ ազնուութեան կարեւորութիւնը, կամ ազատութիւնը, մարդու իրաւունքները, արդարութիւնը որպէս կեանքի կարեւոր երեւոյթներ, եւ ինչո՞ւ չէ, նաեւ Հայոց Ցեղասպանութեան արտացոլիչ գրականութեան մէջ)։
- 3.5 Պատմողական գրութեան մէջ կարենալ զատորոշել եւ ըմբռնել հակադիր տեսակէտները եւ անոնց ազդեցութիւնը ընդհանուր նիւթին վրայ։

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններով եւ պարբերութիւններով շարադրութիւններ: Անոնց գրաւոր խօսքը ցոյց կու տայ թէ նկատի առնուած են ընթերցողը եւ գրելու նպատակը: Ծարադրութիւնները կ'ունենան նիւթը ներկայացնող նախաբան, հիմնաւորող փաստեր եւ եզրակացութիւն: Աշակերտները կը յառաջանան գրաւոր խօսքի գործընթացով կամ հանգրուաններով:

- 1.1 Ստեղծել կառոյց մը, որ հաւասարակշռէ շարադրութեան բոլոր երեւոյթները, գլխաւոր միտքերը իրար կապելու եւ համադրելու համար.
- 1.2 Հաստատումները եւ հարցադրումները հիմնաւորել դէպքերու նկարագրութիւններով, յստակ օրինակներով եւ փաստերով.
- 1.3 Գրութեան կառոյցը մշակելու համար օգտագործել նօթագրելու, ուրուագծելու եւ ամփոփելու մօտեցումներ.
- 1.4 Մէջբերած նախադասութիւններու եւ ուրիշին միտքերը շարադրելու պարագային, նշգրիտ կատարուած ծանօթագրութեամբ անպայման յիշել աղբիւրը.
- 1.5 Ծանօթանալ համակարգիչի հայերէն տառատեսակներուն եւ փորձել շարադրութիւնները համակարգիչով գրել.
- 1.6 Գրութեան կառոյցը բարելաւելու համար վերստուգել սեւագրութիւնը, բառերու նիշդ գործածութիւնը եւ գաղափարներու տրամաբանական զարգացումը.

2.0 Գրաւոր խօսքի կիրառութիւնները (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները կը գրեն պատմողական, բացատրողական եւ նկարագրական շարադրութիւններ՝ իւրաքանչիւրը 300-500 բառերով: Անոնց գրու-թիւնը ցոյց կու տայ անոնց մօտ հայերէն լեզուի իմացութիւնը եւ ուսումնասիրելու, ուրուագրելու եւ սրբագրելու կարողութիւնը:

Ստուգէ բոլոր կարգերուն համար շարադրութեան բառերուն թիւերը:

- 2.1 Կարենալ գրել երեւակայական պատում (գեղարուեստական, ոչ-վավերագրական արձակ) կամ ինքնակենսագրութիւն.
 - ա. ստեղծել բովանդակութիւն, գործողութիւններու նախագիծ (plot), որ ունի սկիզբ, բախում կամ թնկուկ (conflict), գործողութիւններու աստիճանական զարգացում մինչեւ եզրակացութիւն.
 - բ. զարգացնել գլխաւոր եւ երկրորդական կերպարներ եւ համապատասխան միջավայր.

գ. օգտագործել համապատասխան միջոցներ (երկխօսութիւն, խօսակցութիւն, սպասողական վիճակ, շարժումներու, գործողութիւններու եւ արտայայտութիւններու նկարագրութիւն)։

2.2 Գրական վերլուծում կատարել՝

ա. Քննարկումներ կատարել՝ ցոյց տալու համար գրական գործի մը ըմբռնումը։

բ. դատումները հիմնաւորել գրական գործին մէջ եղած կարեւոր միտքերու եւ պատկերներու հիման վրայ։

գ. մեկնարանութիւնները հիմնաւորել գրական գործէն մէջբերուած փաստերով եւ օրինակներով։

2.3 Կարենալ ուսումնասիրական գրաւոր գեկոյց մը պատրաստել՝

ա. նիւթին մասին յստակացնող հարցումներ ուղղել։

բ. ուսումնասիրութեան աւարտին յիշել աղբիւրներու ցանկը։

Գրաւոր եւ բանաւոր խօսքի օրինաչափութիւն

Աշակերտները, իրենց դասարանի մակարդակին համաձայն, կը գրեն եւ կը խօսին հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով։

1.1 Բանաւոր եւ գրաւոր խօսքի մէջ կարենալ գործածել պարզ եւ բարդ նախադասութիւններ, ամբողջական միտք մը արտայայտելու համար։

Քերականութիւն

- 1.1 Վերաբաղ ընել Զ կարգին մէջ սորված քերականական կանոնները եւ խորացնել անոնց ընկալումը.
- 1.2 Խօսքին մասերը (բայ, գոյական, ածական, մակրայ, կապ, դերանուն, շաղկապ) եւ անոնց նշգրիտ գործածութիւնը նախադասութիւններ կազմելու, պարբերութիւններ գրելու եւ խօսելու ատեն.
- 1.3 Առոգանութեան եւ բացայայտութեան նշաններ.
- 1.4 Վանկատումի եւ տողադարձի կանոններ
- 1.5 Կարգ մը բաղաձայներու կանոններ
- 1.6 Ապաթարցի գործածութիւն
- 1.7 Յոգնակերտ մասնիկի ուղղագրական կանոն.
- 1.8 Հոլովներու եւ անկանոն հոլովներու ուղղագրական կանոններ
- 1.9 Վերջածանցներու եւ նախածանցներու ուղղագրութիւն
- 2.0 Բայերու ժխտական ձեւի եւ հրամայական եղանակի գրելաձեւեր
- 2.1 յ տառին գործածութիւն՝ բառին սկիզբը, մէջտեղը եւ վերջաւորութեան.
- 2.2 Բարդումի եւ ածանցումի ընթացքին եղած սղումներն ու փոփոխութիւնները (օր.՝ ոյ-ու, կորսուող ձայնաւորներ, ելւն.).
- 2.3 Խոնարհուած բայերու վերջաւորութիւններու կանոններ.

Ունկնդրել եւ խօսիլ

Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանքեն անոր: Աշակերտներուն օգտագործած ռենը, նախադասութիւններու նիշդ կառոյցը, ձայնի ելեւէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդիրին, հասկնալու համար նիւթին գլխաւոր գաղափարը:

Աշակերտները կը ներկայացնեն նպատակաւորաբար ընտրած ելոյթներ, որոնք յստակ գաղափարներ կ'արտայայտեն եւ կը համապատասխանեն ունկնդիրին հետաքրքրութիւններուն եւ գիտելիքներուն: Անոնք կը գնահատեն բանաւոր հաղորդակցութիւնը:

Ըմբռնում

- 1.1 Քննական-լուսարանական հարցումներ ուղղել, խօսողին հաստատումներուն եւ եզրակացութիւններուն հիմնաւորումը պահանջող.
- 1.2 Բանաւոր ելոյթի մը համար տեղեկութիւնները կազմակերպել այնպէս, որ նպատակ մը հետապնդէ եւ հետաքրքրական ու համապատասխան ըլլայ ունկնդիրներուն.
- 1.3 Հիմնաւորող մանրամասնութիւնները, պատճառները եւ նկարագրութիւնները դասաւորել ունկնդրին համար ազդու եւ համոզիչ կերպով.
- 1.4 Ունկնդիրներուն ուշադրութիւնը լարուած պահել եւ յաջող ելոյթ ունենալ ազդեցիկ արտայայտութիւններով, դէմքի արտայայտչականութեամբ եւ շարժումներով, ունկնդիրներուն հետ հայեացքով կապ հաստատելով (eye contact).
- 1.5 Կարենալ արժեւորել եւ հիմնաւորուած կարծիք յայտնել որեւէ բանաւոր ելոյթի մասին՝ ընդգրկելով նիւթին տրամաբանութիւնը, բովանդակութիւնը, եւ խօսիլ ունկնդիրներու վրայ ելոյթին ձգած ընդհանուր ազդեցութեան մասին.
- 1.6 Քննարկել եւ գրոյցի նիւթ դարձնել մամուլը եւ այլ հաղորդակցական միջոցները վերլուծելով գրութեան, ձայնին եւ նկարներուն միջոցով գործուած ազդեցութիւնը.

2.0 Խօսքի կիրառութիւններ (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները պէտք է կարենան իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին բանաւոր ներկայացում կատարել, որ կազմակերպուած ըլլայ մէկ նիւթի շուրջ: Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ հայերէն լեզուի ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը:

Աշակերտները լաւ կազմակերպուած բանաւոր ելոյթներ կ'ունենան՝ օգտագործելով աւանդական նարտասանական ձեւերը (պատմել, բացատրել, համոզել, նկարագրել): Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ լեզուի ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշներու իմացութիւն:

Լսելու եւ խօսելու թիւ 1.0-ի մէջ բերուած strategy-ները օգտագործելով աշակերտները՝

2.1 Կ'ունենան պատմողական ելոյթներ՝

ա. ստեղծել բովանդակութիւն, գործողութիւններու նախագիծ (plot), եւ միջավայր.

բ. ընդգրկել զգացական մանրամասնութիւններ եւ յստակ լեզու՝ պատմութեան նախագիծ plot-ը եւ կերպարները զարգացնելու համար.

գ. օգտագործել պատմողական տարրեր միջոցներ (խօսակցություն, նկարագրություն, լարուածություն, սպասողական վիճակ)։

2.2 Կարենալ յօդուածներու կամ գրքերու բանաւոր ամփոփումը կատարել։

ա. ընդգրկել գլխաւոր միտքերը եւ կարեւոր մանրամասնութիւնները։

բ. ամփոփումը կատարել աշակերտին բառերով, բացի եթէ մէջբերումներու կարիք ըլլայ։

գ. ցուցաբերել նիւթի եւ աղբիւրներու ամբողջական եւ ոչ մակերեսային հասկացողութիւն։

2.3 Բանաւոր ուսումնասիրական ելոյթ ունենալ՝

ա. նիւթին շուրջ կարճ հարցեր տալ։

բ. նիւթին նկատմամբ յստակ եւ ճշգրիտ տեսակէտ փոխանել։

Ազգային Վարժարաններու Հայերէն Լեզուի Համադրուած եւ Նոյնացուած Դասածրագիր

Ութերորդ Դասարան

Ընթերցանութիւն

1.0 Բառի վերլուծում, ընթերցանութեան սահունութիւն եւ բառապաշարի աստիճանական զարգացում

Աշակերտները կ'օգտագործեն իրենց գիտելիքները բառերու արմատներուն եւ անոնց իրարու հետ ունեցած յարաբերութեան (կապակցութեան) մասին, կարենալ հասկնալու համար անծանօթ բառերուն իմաստը:

- 1.1 Գրութեան մը մէջ վերլուծել դարձուածքները, փոխաբերական իմաստով եւ պատկերաւոր կերպով կատարուած արտայայտութիւնը եւ նմանութիւնը՝ կարենալ եզրակացնելու համար խօսքին նշանակութիւնը:
- 1.2 Ճանչնալ պարզ եւ գործածական բառերու կապը Գրաբարին հետ կարենալ տեսնելու համար ժամանակի ազդեցութիւնը բառերու իմաստային փոփոխութեան վրայ.
- 1.3 Կարենալ հասկնալ բառի մը իմաստը եւ գայն նախադասութեան մէջ օգտագործել:

2.0 Ընթերցանութեան ըմբռնում (ուշադրութիւնը՝ տեղեկատուական նիւթերուն վրայ)

Աշակերտները կը կարդան եւ կը հասկնան դասարանի մակարդակին յարմար նիւթերը: Անոնք կը բացատրեն եւ իրարու կը կապեն գրութեան գլխաւոր միտքերը, տուեալները՝ օգտագործելով իրենց գիտելիքները գրութեան կառոյցին եւ նպատակին մասին: 7-րդ եւ 8րդ կարգերէն սկսեալ, ուր աշակերտները զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն ընթերցանութեան մէջ, անոնք կը կարդան նաեւ օրաթերթ, պարբերականներ եւ գրական երկեր: Աշակերտները տարուան ընթացքին գոց կը սորվին նուազագոյնը հինգ բերթուած, որոնք կրնան ըլլալ դասագիրքէն կամ անկէ անկախ: Գերթուածներուն նիւթը յանձնարարելի է, որ ըլլայ հայրենասիրական եւ ազնիւ նպատակներու ձօնուած:

- 2.1 Կարենալ վերլուծել այն գրութիւնները, որոնց մէջ օգտագործուած է պատմաո/հետեւանք կառուցուածքը:
- 2.2 Գրութիւններու մէջ կարենալ գտնել նմանութիւններ եւ տարբերութիւններ, գաղափարներու առաջադրման, կազմակերպման եւ ներկայացման գծով.
- 2.3 Համեմատել բնագիր մը իր ամփոփուած տարբերակին հետ՝ տեսնելու համար, թէ ամփոփումը որքանով կրցած է ընդգրկել կարեւոր գաղափարներն ու մանրամասնութիւնները.

3.0 Գրական վերլուծում

Աշակերտները կը կարդան պատմական եւ մշակութային արժէք ունեցող գրականութիւն, որ կը հարստացնէ պատմութեան եւ ընկերային գիտութեան մասին անոնց գիտելիքները: Անոնք յստակօրէն կ'ըմբռնեն գաղափարները (միտքերը) եւ կը գտնեն անոնց առնչութիւնը այլ գրական գործերու հետ:

- 3.1 Կարենալ բացատրել չափածոյ տարրեր գործերու մէջ նպատակն ու ժանրային իւրայատկութիւնները (օր.՝ ֆնարերգութիւն, եղերերգութիւն, ներբող, դիւցազներգութիւն).
- 3.2 Կարենալ արժեւորել գործողութիւններու նախագիծին (plot) տարրերը եւ աստիճանական զարգացումը (օր.՝ ուրուագիծ, գուգահետ դէպքեր, գագաթնակէտ).
- 3.3 Կարենալ համեմատել պատմական տարրեր ժամանակաշրջաններու ընթացքին պատահած մեանօրինակ դէպքերու կամ իրավիճակներու մէջ գտնուող գրական կերպարի մը (հերոսի) մղումները եւ հակադրեցութիւնները.
- 3.4 Վերլուծել գրութեան մը մէջ նկարագրուած միջավայրին առնչութիւնը գրութեան պարզած տրամադրութեան, ոնին եւ իմաստին հետ (վայր, ժամանակ, սովորութիւններ).
- 3.5 Կարենալ հասկնալ եւ վերլուծել գրական գործերու մէջ ներկայացուող մարդկային առաքինութիւնները եւ վսեմ գաղափարները, որպէս կեանքի կարեւոր երեւոյթներ, ինչու չէ նաեւ Հայոց Ցեղասպանութեան եւ պատմական աղէտներու արտացոլումը գրականութեան մէջ:
- 3.6 Հանչնալ հեղինակին կողմէ օգտագործուած գրական միջոցները (պատկերաւոր արտայայտութիւն, խորհրդապաշտութիւն, բարբառ, հեգնանք), որոնք գործին ոնը կը յատկանշեն եւ կ'օժանդակեն գրութեան ըմբռնումին եւ վերլուծումին:
- 3.7 Վերլուծել գրական գործ մը՝ ցոյց տալով թէ հեղինակին ազգային ժառանգութիւնը, աւանդութիւնները, հաւատամքն ու սովորութիւնները ինչպիսի՞ անդրադարձ ունեցած են գործին մէջ.

Գրել

Աշակերտները կը գրեն յստակ եւ կապակցուած նախադասութիւններով եւ պարբերութիւններով շարադրութիւններ: Անոնց գրաւոր խօսքը ցոյց կու տայ, թէ նկատի առնուած են ընթերցողները եւ գրելու նպատակը: Շարադրութիւնները կ'ունենան նիւթը ներկայացնող նախաբան, հիմնաւորող փաստեր եւ եզրակացութիւն: Աշակերտները կը յռաջանան գրաւոր խօսքի գործընթացով կամ հանգրուաններով:

- 1.1 Գրել շարադրութիւն մը, որ ըլլայ տպաւորիչ, ունենայ զարգացող նիւթ եւ վերջանայ յստակ եւ լաւ հիմնաւորուած եզրակացութեամբ.
- 1.2 Իւրաքանչիւր պարբերութեան մէջ եւ պարբերութիւններու միջեւ հաստատել փոխկապակցուածութիւն՝ տրամաբանական անցումներով:
- 1.3 Նիւթը հիմնաւորել օգտագործելով հեղինակներէ առնուած փոխաբերութիւններ, խօսքեր, մէջբերումներ, կարծիքներ, համեմատութիւններ.
- 1.4 Համացանցի օգնութեամբ ուսումնասիրութիւն կատարել փնտրուած տեղեկութիւնները գտնելու համար.
- 1.5 Պահել հաւասարակշռութիւնը ձեռք բերուած տեղեկութիւններուն եւ անձնական միտքերուն միջեւ.
- 1.6 Վերստուգել սեւագրութիւնը՝ բարելաւելու համար գրութեան կառոյցը, բառերու նիշդ գործածութիւնը, պարբերութիւններու, ենթարաժամումներու եւ գլխաւոր միտքերու միջեւ կատարուած անցումները.

2.0 Գրաւոր խօսքի կիրառութիւնները (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները կը գրեն պատմողական, բացատրողական, եւ նկարագրական շարադրութիւններ՝ իւրաքանչիւրը ??? բառերով: Անոնց գրութիւնը ցոյց կու տայ հայերէն լեզուի իմացութիւն եւ ուսումնասիրելու, ուրուագրելու եւ սրբագրելու կարողութիւն:

2.1 Կարենալ գրել կենսագրութիւններ, ինքնակենսագրութիւն եւ պատմուածք՝

ա. պատմել յստակ դէպք մը, կամ իրավիճակ մը՝ անհրաժեշտ մանրամասնութիւններով.

բ. օգտագործել պատմողական ու նկարագրական ձեւեր եւ միջոցներ (համապատասխան խօսակցութիւն, յատուկ գործողութիւններ, ֆիզիքական նկարագրութիւններ, միջավայրի նկարագրութիւն, հերոսներու համեմատութիւն եւ հակադրութիւն).

2.2 Գրական վերլուծում կատարել՝

- ա. ֆննարկումներ կատարել ցոյց տալու համար գրական գործի մը ուշադիր ընթերցումը եւ ըմբռնու մը.
- բ. Կատարուած դատումները հիմնաւորել գրական գործին մէջ եղած կարեւոր միտքերու եւ պատկերներու հիման վրայ.
- գ. Գրութեան ձգած տպաւորութեան եւ ազդեցութեան մասին հիմնաւորուած հետեւութիւններ կատարել.
- դ. դատումները հիմնաւորել յղումներ կատարելով գրութեան, այլ հեղինակներու գրական գործերուն կամ անձնական գիտելիքներուն.

2.3 Կարենալ ուսումնասիրական գրաւոր գեկոյց մը պատրաստել.

- ա. Նիւթ մը ընտրել.
- բ. արձանագրել կարեւոր միտքեր եւ ուղղակի մէջբերումներ կարեւոր տարբեր աղբիւրներէ.
- գ. օգտագործել անմիջական (primary) եւ երկրորդական (secondary) աղբիւրներ եւ նշել իւրաքանչիւրին բնոյթը.
- դ. տեղեկութիւնները դասաւորել եւ ի հարկին զանոնք ներկայացնել վիճակագրական տուեալներով եւ փարտէսներով.

Գրաւոր եւ Բանաւոր Խօսքի Օրինաչափութիւն

Աշակերտները, իրենց դասարանի մակարդակին համաձայն, կը գրեն եւ կը խօսին հայերէն գրական աշխարհարարին չափանիշերով:

Նախադասութեան կառոյց

- 1.1 Օգտագործել նիշդ եւ զանազան նախադասութիւններու տեսակներ եւ խօսքի բացման ձեւեր, որոնք անձնական կենդանի ոն մը կը ձեւաւորեն.
- 1.2 Արտայայտուած միտքերը դասաւորել՝ համեմատութեամբ բերուած բացատրութիւններով.

Քերականություն

Վերափառված ընկերության ցարդ ստրված քերականական եւ ուղղագրական բոլոր կանոնները, ընդարձակելով անոնց ծանօթութիւնը եւ գործածութիւնը:

Ունկնդրել եւ խօսիլ

1.0 Լսելու եւ խօսելու strategy-ներ

Աշակերտները կը ներկայացնեն նպատակաուղղուած ելոյթներ, որոնք յստակ գաղափարներ կ'արտայայտեն եւ կը համապատասխանեն ունկնդրին հետաքրքրութիւններուն եւ գիտելիքներուն: Անոնք կը գնահատեն ու կ'արժեւորեն բանաւոր հաղորդակցութիւնը: Աշակերտները ուշադրութեամբ կը լսեն բանաւոր խօսքը եւ կ'արձագանքեն անոր: Աշակերտներուն օգտագործած ռը, նախադասութիւններու նիշդ կատոյցը, ձայնի ելեւէջներու փոփոխութիւնը կ'օգնեն ունկնդրին հասկնալու համար նիւթին գլխաւոր գաղափարը:

- 1.1 Վերլուծել գրական բանաւոր մեկնարանութիւնները եւ այդ մեկնարանութեան մէջ գործածուած լեզուն, ներկայացման ձեւը եւ ունկնդրին վրայ ձգած տպաւորութիւնը.
- 1.2 Կարենալ հասկնալ խօսողին տեսակէտը եւ անոր բանաւոր ելոյթին, բովանդակութեան, նպատակին մասին հարցումներ ուղղել եւ կարծիք յայտնել:
- 1.3 Բանաւոր ելոյթի մը ընթացքին տալիք տեղեկութիւնները կազմակերպել այնպէս, որ նպատակ մը հետապնդէ (եւոյթին պատգամը, բառապաշարը, ձայնային ելեւէջները, արտայայտչական ձեւերը համապատասխանեցնելով նպատակին եւ ունկնդրներուն):
- 1.4 Պատրաստել բանաւոր ելոյթի ուրուագիծը, որ հիմնուած ըլլայ կազմակերպչական ընտրուած ձեւի մը վրայ. իսկ այդ ձեւը ընդհանրապէս կ'ընդգրկէ նախարան մը, անցումներ, նիւթի նախաճաշակ եւ ամփոփում. կ'ունենայ նիւթի տրամաբանական զարգացում եւ եզրահանգում.
- 1.5 Օգտագործել ճշգրիտ լեզու, գործողութիւն ցոյց տուող բայեր, աւելի քան կրաւորական, գունագեղ լրացումներ՝ եւոյթը կենդանի եւ հետաքրքրական դարձնելու համար.
- 1.6 Պաշտօնական ելոյթներուն գործածել նիշդ եւ տեղին քերականութիւն, բառապաշար, արոգանութիւն եւ յարմար կշռոյթ.
- 1.7 Ուշադրութիւն ընել ունկնդրներու թե՛ խօսքով եւ թե՛ շարժումներով արտայայտուած հակադրեցութեան՝

ա. վերանայելով եւ փոփոխութեան ենթարկելով կազմակերպչական կառոյցը կամ ծրագիրը.

բ. վերադասաւորելով բառերն ու նախադասութիւնները՝ աւելի յստակացնելու համար իմաստը.

1.8 Կարենալ արժեւորել խօսողի մը վստահելիութիւնը, թէ որքանով կարելի է անոր ըսածներուն հաւատք ընծայել:

1.9 Մեկնաբանել եւ արժեւորել ընդհանրապէս պատկերի (գծագրութիւն, նկարչութիւն, լուսանկար, ֆիլմ, լրատուական պատկերահանումներ) միջոցաւ փոխանցուած պատգամի մը կամ տեղեկութեան մը ազդեցութիւնը՝ տպաւորութիւններ եւ կարծիքներ ձեւաւորելու մէջ.

2.0 Խօսքի կիրառութիւններ (ոն եւ անոր առանձնայատկութիւնները)

Աշակերտները պէտք է կարենան իրենց անձնական փորձառութիւններուն կամ հետաքրքրութիւններուն մասին բանաւոր ներկայացում կատարել, որ կազմակերպուած ըլլայ մէկ նիւթի շուրջ: Անոնց բանաւոր խօսքը ցոյց կու տայ հայերէն լեզուի ինչպէս նաեւ բանաւոր խօսքի չափանիշերու իմացութիւնը:

Լսելու եւ խօսելու թիւ 1.0-ի մէջ բերուած strategy-ները օգտագործելով աշակերտները՝

2.1 Կ'ունենան պատմողական ելոյթներ (կենսագրական կամ ինքնակենսագրական)՝

ա. պատմել յստակ դէպք մը, կամ իրավիճակ մը՝ նիշդ ընտրուած մանրամասնութիւններով.

բ. բացայայտել նիւթին կարեւորութիւնը հեղինակին համար կամ հեղինակին վերաբերումը նիւթին նկատմամբ.

գ. օգտագործել պատմողական եւ նկարագրական ձեւեր-միջոցներ (համապատասխան խօսակցութիւն, յատուկ գործողութիւններ, ֆիզիքական նկարագրութիւններ, միջավայրի նկարագրութիւն, հերոսներու համեմատութիւն եւ հակադրութիւն).

2.2 Գրական ֆննդատութեան բանաւոր ելոյթներ՝

ա. մեկնաբանել կարդացածը եւ լուսաբանութիւններ տալ այդ մասին.

բ. դատումները հիմնաւորել գրական գործին մէջ եղած կարեւոր մտքերով եւ պատկերներով.

գ. ունկնդրողին վրայ ձգած գրական գործին ազդեցութեան մասին հիմնաւորուած հետեւութիւններ կատարել.

դ. դատումները հիմնաւորել յղումներ կատարելով գրութեան, այլ գործերու, այլ հեղինակներու եւ կամ անձնական գիտելիքներուն.

2.3 Բանաւոր ուսումնասիրական ելոյթ ունենալ՝

ա. Նիւթ մը ընտրել.

բ. արձանագրել կարեւոր աղբիւրներէ առնուած միտքեր եւ ուղղակի մէջբերումներ: Ամփոփել կամ իր բառերով գրել նիւթին մասին արտայայտուած տարրեր կարծիքները.

գ. օգտագործել անմիջական (primary) եւ երկրորդական (secondary) աղբիւրներ եւ նշել իւրաքանչիւրին ընդոյթը.

դ. տեղեկութիւնները դասաւորել եւ զանոնք ներկայացնել վիճակագրական տուեալներով եւ քարտէսներով.

2.4 Արտասանել բանաստեղծութիւններ (4-6 տուն), թատերական մենախօսութիւններ՝ օգտագործելով իմաստը հարստացնող առոգանութիւն եւ արտայայտիչ շարժումներ.